ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՆԴԱՊԵՏ ՔԼՈՏ ՍԹՈՔՍԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1920ին[1]

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲԵԱՆ
vanik.virabyan@mail.ru

ՄՈՒՏՔ

1918ի վերջերին Անդրկովկասի ռազմակալումից քիչ անց անգլիացիների ադրբեջանամէտ եւ թուրքամէտ դիրքորոշումը էթնիկական, տնտեսական, ռազմական այլ տեսանկիւններից հայկական կառավարութեան մօտ շատ դէպքերում տարակուսանք եւ հիասթափութիւն առաջացրեց: 1920ի սկզբներին ակնյայտ դարձաւ, որ խորհրդային ուժերը յաղթող էին դուրս եկել Դաշնակիցների կողմից ֆինանսաւորուած եւ ռազմապէս աջակցուող սպիտակ ուժերի դէմ քաղաքացիական առճակատումում: 1920ի Յունուարից-Ապրիլ ամիսներին, բոլշեւիկեան ուժերը սրընթաց տեղաշարժուեցին Կովկաս՝ այն վերանուաճելու յստակ մտադրութեամբ: ՀՀ արեւմտեան արեւելումը ճակատագրական եղաւ, քանզի ուշացումով պարզ դարձաւ, որ ՀՀ քաղաքական ղեկավարութիւնը նոյնիսկ չփորձեց աւելի արագ գործել՝ խորհրդային աջակցութիւնը շահելու կամ խորհրդային գործօնը իրատեսօրէն հաշուառելու եւ օգտագործելու համար: ՀՀն չփորձեց հնարաւորինս աւելի ճկուն եւ դաշնակիցների թղթային խոստումներից ոգեւորուած պակաս-նախայարձակ գտնուել թուրք ազգայնականների հանդէպ[2]: Պատմաբան Ռիչըրտ Յովհաննիսեանը գտնում է՝

> «հակառակ իրենց հաստատ արեւմտեան արեւելումին, Դաշնակցութիւնը եւ հայկական կառավարութիւնը մնացին առանձին եւ լքուած Արեւմուտքի կողմէ[3], [որը] Հայաստանը գծած էր թուղթի վրայ...Դաշնակցութեան արեւմտեան արեւելումը բաւարար չէր օժանդակութիւն ապահովելու համար: Միւս կողմէ՝ խորհրդաթրքական գործակցութիւնը հետզհետէ կ'ընդլայնէր իւրաքանչիւր շաբթուան հետ: Խորհրդային ոսկի եւ զինամթերք հասան Մուսթաֆա Քեմալի ազգայնական ուժերուն ... Խորհրդային Ռուսաստանի եւ ազգայնական Թուրք-

---

[1] Հետազօտութիւնը տպագրւում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 Հոկտեմբերի 11ի N 1693-Ա/2 հրամանով հաստատուած Գիտութեան Պետական Կոմիտէի Պայմանագրային (Թեմատիկ) Հայտի (21T-6A102. «Հայաստանը Անդրկովկասում եւրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչութիւնների հետ փոխյարաբերութիւնների համատեքստում (1917-20 թթ.)» շրջանակում:

[2] Ronald Grigor Suny, *Armenia in the Twentieth Century*, Chico, CA, Scholars Press, 1983, էջ 32-33:

[3] Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դերը», *Դրօշակ*, թիւ 19 (1402), 13 Յունուար, 1993, էջ 32:

հոյ շահերուն կը համապատասխանէր իրենց միջեւ կովկասեան անցքը բանալ (ասել է է այն Զանգեզուր-Սիւնիքի միջանցքը, որն այսօր նրանց համար ռազմավարական գերնպատակ է դարձել - Վ.Վ.): Այս հաշուարկներուն մէջ, Հայաստան պէտք է չէզոքացուէր, կամ նոյնիսկ վերացուէր[4]:

Յիրաւի, ռազմավարական առումով թանկարժէք ժամանակը կորցուեց չիմնատրուած խուսանաւումների ու սեւրեան սպասումների վրայ, եւ Յովհաննիսեանի եզրայանգմամբ՝ երկիրը ուժասպառ եղաւ, Արեւմուտքից օժանդակութիւն չեղաւ, եւ յաւելեալ ուշացումը անհրաժեշտութիւն դարձրեց ոչ միայն բոլշեւիկեան Ռուսաստանի եւ Թուրքիայի գործակցութիւնը, այլեւ առիթ տուեց թուրքերին Հայաստանը բնաջնջելու եւ ճնշող պայմաններ պարտադրելու[5]: Թէկուզեւ ուշացումով, հենց այդ ժամանակ արդէն կար ոչ-շատ հաստատուն, սակայն աստիճանաբար որոշակիացող համոզմունք՝ բոլշեւիզմի հնարաւոր հաստատունութեան եւ համաշխարհային նոր ռէալ ուժ դառնալու տեսանկիւնից: Ինչպէս շատ դիպուկ նկատել է ամերիկահայ պատմաբան Ռոնըլտ Սիւնին, 1920 Փետրուարից Դեկտեմբեր բախտորոշ ամիսներին պարզ դարձան հայկական պետութեան հանդէպ արեւմտեան հաւատարմութեան սահմանները, եւ քեմալական թուրքերի ու Խորհրդային Ռուսաստանի մահաբեր դաշինքն[6] իր շրջապտոյտի մէջ առաւ հայկական հանրապետութեանը: Փետրուարին Լոնդոնի համաժողովից[7] սկսած, ՀՀն հետզհետէ կորցրեց դաշնակիցների «արդիւնաւէտ» եւ ցանկալի աջակցութիւնը, իսկ Ապրիլին Սան-Ռեմոյում Բրիտանիան, Ֆրանսան եւ Իտալիան յստակեցրին, որ չնայած հայ ժողովրդի կորուստների ու հաւատարմութեան հանդէպ իրենց կարեկցութեանը, իրենք հայկական հանրապետութեան գոյութիւնը երաշխաւորելու նպատակով ամէնեւին էլ ուժ չեն կիրառի: Սին յոյսեր կային, թէ Մ. Նահանգները կը վերցնի այդ բեռն իր վրայ, սակայն վերջինս էլ դեռ 1920ի գարնանը արդէն յստակ հրաժարուել էր ՀՀի նկատմամբ խնամակալութեան բեռից: Դաշնակիցները արդէն չէին էլ մտածում խանգարել Քեմալին՝ ՀՀի ոչնչացման նրա յարձակողապաշտ ծրագիրը, եւ ինչպէս յստակ նկատել է Ռուբէն Սաֆրաստեանը՝ սկսած 1920 ամռանից եւ մանաւանդ հայ-թուրքական պատերազմի սկզբնական փուլում քեմալականների ձեռք բերած յաջողութիւններից յետոյ Անկարայի եւ Լոնդոնի միջեւ ի յայտ եկան որոշ ընդհա-

---

[4] Նոյն:

[5] Նոյն, էջ 33:

[6] Suny, էջ 32-33:

[7] Լոնդոնի համաժողովը (1921 Փետրուար 21-Մարտի 14), որին մասնակցել են Անտանտի մի շարք տէրութիւններ՝ Բրիտանիան, Ֆրանսան, Իտալիան, Բելգիան, Ճապոնիան, Յունաստանը) եւ առաջին աշխարհամարտում պարտուած Գերմանիան ու Թուրքիան, այլեւ արդէն չգործող ՀՀ ներկայացուցչութիւնը՝ Աւետիս Ահարոնեանի գլխաւորութեամբ: Այնտեղ քննարկուել է իմիջիայլոց 1920 Սեւրի հաշտութեան պայմանագրի վերանայման հարցը:

նուր եզրեր, սկիզբ դրուեց գաղտնի շփումների դիւանագիտութեանը: Թուրքական աղբիւրները նշում են, թէ Քեմալը կարողացաւ ճիշտ գնահատել այդ նոր ձեաւորուող իրադրութիւնը եւ ճարպկօրէն օգտուեց դրանից[8]: Արդիւնքում, Անդրկովկասում եւ ՀՀում Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ Քլոտ Պէյֆիլտ Սթոքսը եւ այլ երկրների ներկայացուցիչները ՀՀ կառավարութեանը խաբէութեամբ տրամադրելով ընդդէմ բոլշեւիկեան Ռուսաստանի, 1920 Սեպտեմբերին սկսուած թուրք-հայկական պատերազմում ձախողուելուց յետոյ, խորհուրդ տուեցին լեզու գտնել թուրքերի հետ, որն էլ պարտադրեց Ալեքսանդրապոլի ամօթալի եւ տարածքային անդամահատմամբ աւարտուած անձնատուութիւնը: Դրան էլ յաջորդեց Հայաստանի մասնատումը Թուրքիայի եւ բոլշեւիկեան Ռուսաստանի միջեւ:

Այս առումով, Անդրկովկասում եւ ՀՀում դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցիչների գործունէութեան ամբողջական բացայայտման տեսանկիւնից կարեւորւում է բրիտանական բարձրագոյն յանձնակատար գնդապետ Սթոքսի գործունէութիւնը[9], որին նուիրուած է այս ուսումնասիրութիւնը:

---

[8] Ռ. Սաֆրաստեան, *Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետութեան դէմ (1919-1921 թթ.)*, ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտ, «Տիր» հրատ., Երեւան, 2019, էջ 80-81:

[9] Քլոտ Պէյֆիլտ Սթոքս (1875- 1948).- 1907-11՝ Թեհրանում զինուորական կցորդ, երկար տարիներ ծառայել է Ասիայում, առաջին աշխարհամարտի սկզբից ծառայել է բրիտանական հնդկական բանակի գլխաւոր սպայակոյտի հետախուզական բաժանմունքում: Ամուսնացել է Օլկա Պոստովսկայի հետ Թուրքիայում 1920ականների սկզբին եւ ունեցել մէկ դուստր: 1919ին դարձել է Դաշնակիցների գերագույն յանձնակատարութեան ներկայացուցիչը, 1920-21՝ ապրել է Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում: Նա վերջին բրիտանացիներից էր, որ 1921 Մարտին միայն՝ արդէն Վրաստանի բռնի խորհրդայնացումից յետոյ Բաթումիից տարագիրների նաւով լքեց Անդրկովկասը (Георгий Мамулиа, Рамиз Абуталыбов, К вопросу принятия де-факто государственной независимости Азербайджана на Парижской мирной конференции [Գէորգի Մամուլիա, Ռամիզ Աբութալիբով, Փարիզի խաղաղութեան համաժողովում Ադրբեջանի փաստացի պետական անկախութիւնն ընդունելու հարցի շուրջ]՝ https://tvesti.ru/ fenomen-polkovnika-stoksa-libo-kak-anglichanka-gadit-armenii.html:
https://Kafkassam.com/история-признания.html" մատչում՝ 4.11.2023): Севиндж Алиева, Азербайджанская Демократическая Республика и государства Северного Кавказа в 1918-1920 гг.// Азербайджанская Республика-100. История, политика, культура: сборник статей / сост. Ш. Н. Камалова, Санкт-Петербург: Нестор-История (Սեւիջ Ալիեւա, Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութիւնը եւ Հիւսիսային Կովկասի պետութիւնները 1918-1920 թթ.//Ադրբեջանական Հանրապետութիւն-100, Պատմութիւն, քաղաքականութիւն, մշակոյթ. յօդուածների ժողովածու (կազմ.՝ Շ. Ն. Քամալովա), 2018, էջ 3-4, 8-22:

ՔԼՈՏ ՊԷՅՖԻԼՏ ՍԹՈՔՍ

Քլոոտ Պէյֆիլտ Սթոքսը՝ բրիտանական զօրքերի անդրկովկասեան տարածաշրջանից դուրս բերման մասին 1919ի սկզբներին որոշում ընդունելուց յետոյ, դարձաւ Դաշնակիցների գերագոյն յանձնակատարութեան ներկայացուցիչը Բաքւում: Պատմագիտութեան դոկտոր, վրաց միջազգայնագէտ, 1992-94՝ Վրաստանի նախագահի խորհրդական Գէորգի Մամուլիայի եւ խորհրդային եւ ադրբեջանական դիւանագէտ, հասարակական գործիչ ադրբեջանցի պատմաբան Ռամիզ Աբութալիբովի կարծիքով Սթոքսը, ինչպէս եւ «հնդկական ծառայութեան» շատ բրիտանական սպաներ, լաւ գիտէին Ռուսաստանը եւ նրա նպատակները Մերձաւոր Արեւելքում: Նրանք չափազանց լաւ վերաբերմունք ունէին ադրբեջանցիների նկատմամբ, համոզուած կողմնակից էին Ադրբեջանի եւ Վրաստանի անկախութեան[10]: 1920 գարնանից Անդրկովկասում բրիտանական հրամանատարութիւնը - ինչպէս եւ այլ տեղերում, որոնցում նրա քաղաքականութիւնը իրագործողները գլխաւորապէս «հնդկական դպրոցի» սպաներ էին - սկսեց իրականացնել մուսուլմանական տարրի նկատմամբ հնարաւոր բոլոր տեսակի զիջումների քաղաքականութիւն: Նա հետեւողականօրէն ձգտեց ապահովել բրիտանական հեղինակութեան ամրապնդումը մուսուլմանական աշխարհում: Այդ նոյն միտքն է շեշտում նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարարութեան ընդհանուր քարտուղար Յովհաննէս Տէր Յակոբեանը 1919 Սեպտեմբերի 16ին Թիֆլիսում հայկական դիւանագիտական հաւատարմատարին ուղղած ուղերձում.

> Փարիզի մեր պատուիրակութեան գրութիւններից պարզւում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայութեան ամբողջ ընթացքում եղել են ոչ-անկեղծ դէպի մեզ եւ վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականութիւն. թէ՛ Տոմսոնի եւ թէ՛ միւս գեներալների (անգամ մեզ մօտ հայասէր համարուած Անդրկովկասում բրիտանական օկուպացիոն զօրքերի շտաբի քաղաքական բիւրոյի ղեկավար գեներալ Վ. Հ. Բիչի) զեկուցումները, մասնաւորապէս Ղարաբաղի եւ առհասարակ մեզ վերաբերող խնդիրներում միշտ եղել են ի վնաս մեզ[11]:

Արդիւնքում, Հայկական Հարցը փակուղի մտաւ, սահմանային-տարածքային հարցերում համաձայնութիւն չկայացաւ եւ փոխզիջումներ էլ չեղան հարեւան հանրապետութիւնների հետ, առաւել եւս ռազմաքաղաքական գործակցութեան իրական եւ արդիւնաւէտ հնարաւորութիւնները յօդս ցնդեցին, ՀՀ քաղաքական շրջանակների եւ զինուորական այրերի հաշուարկները խճճուեցին Արեւմտահայաստանի եւ Արեւելահայաստանի սահմանների հնարաւոր լաւագոյն տարբերակների որոնումների կառուցման մէջ, որոնց խնդրով մեծ ակնկալութիւններ կային ամենազօր դաշնա-

---

[10] Мамулиа-Абуталыбов, էջ 3-4, 8-22:

[11] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), Ֆ. 200, ց. 1, գ. 62, թ. 45; Ֆ. 275, ց. 5, գ. 97, թ. 126:

կիցներից: Իսկ վերջիններս ՀՀ կառավարութեանը եւ ժողովրդին ոգեւորել էին Սեւրի պայմանագրով մեծ Հայաստանի արբեցնող տեսլականով: Այստեղ աւելի տեղին է անգլիական բանակի հրամանատար, հայասիրութեամբ չփայլած Ալֆրէտ Ռոլինսընի կարծիքը: Նա հայ զինուորականների հետ զրոյցում յայտնել է հետեւեալը.

> Ինչին են պէտք ձեզ վիլայէթները, եթէ դուք զօրք չունէք գրաւելու ձեր ներկայիս տարածքը: Մուսուլմանները ձեզ կամաւոր չեն թողնի, իսկ ուժեր դուք չունէք... Մենք ժանդարմներ չենք, որպէսզի ուրիշների համար կարգ ու կանոն հաստատենք... Տրապիզոնը ձեր վրայ կը նստի մեծ փողեր, որը դուք չունէք: Եթէ դուք ունէք օգտակար հանածոներ, մշակէք-արդիւնահանէք ինքներդ, իսկ մեզանից նիւթական օգնութիւն մի սպասէք[12]:

Այդ ընթացքում մասնաւորապէս, Էնվէր փաշայի դրածոները եւ գործակալները միանգամայն ազատ շրջում էին եւ գործում անդրկովկասեան կարեւոր կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքւում, Բաթումիում, Ղարաբաղում, Նախիջեւանում եւն.: Բրիտանացիները նրանց գործունէութեանը հետեւում էին մատերի արանքով: Ինքը՝ Էնվէրը - որն իբր փնտռտում էր բրիտանական հրամանատարութեան կողմից - ազատ շրջում էր Թիֆլիսում, եւ բրիտանական սպայակոյտը տեղեկացուած էր նրա տեղի եւ տեսակցութիւնների մասին, իսկ ժամանակաւորապէս ձերբակալուած թուրք գործակալ Քեազիմ բէյին Դիրիկ հնարաւորութիւն տրուեց փախչել[13]: Սա բրիտանական ռազմաքաղաքական առաքելութիւնների ակնյայտ մուսուլմանամէտ քաղաքականութեան փաստ էր: Բրիտանական կարեւորագոյն նպատակադրումներից դարձան.- ա) անդրկովկասեան հանրապետութիւնների անջրպետումը Ռուսաստանից, բ) հեռահար ռազմավարութեան առումով Կարմիր եւ Սպիտակ Ռուսաստանների բախման միջոցով Ռուսաստանի վերջնական թուլացումը, մասնատումը եւ վերածումը երկրորդական երկրի:

Սա անգլոսաքսոնական աշխարհաքաղաքականութեան վերջնանպատակներից էր, որի համար թէ՛ Սթոքսը եւ թէ՛ ողջ բրիտանական ռազմաքաղաքական առաքելութիւնը Անդրկովկասում արեց հնարաւոր եւ անհնար ամէն ինչ, գործադրելով բոլոր լծակները: Դա Անդրկովկասում բրիտանական ռազմական առաքելութեան կողմից վերածուեց յստակ եւ չքողարկուած թուրքամոլ-քեմալամոլ ռազմավարութեան, ինչը դարձաւ բրի-

---

[12] ՀԱԱ, ֆ. 67, ց. 1, գ. 149, թ. 224. նաեւ՝ Г. Р. Мархулия, *Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями)* (Գ. Ռ. Մարխուլիա, Հայ-վրացական փոխյարաբերութիւնները 1918-1920 թթ.) վրաց. թարգմանութիւնը Ի. Ճաւախիշվիլիի անուան պետական համալսարան, Թբիլիսի, 2007, էջ 60:

[13] Հնարաւորութիւն տրուեց փախչել նաեւ Նուրի փաշային (Микаел Туманян, *Дипломатич еская история Республики Армения. 1918-1920* [Միքայէլ Թումանեան, Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական պատմութիւնը 1918-1920], ՀԱԱ, Երեւան, 2012, էջ 399):

տանական քաղաքականութեան անկինաքարը 1920ին, որի զոհն էլ դարձաւ Հայաստանի Հանրապետութիւնը:

Նրա՝ 1918 Դեկտեմբերի կէսերից Կովկասում փաստացի ռազմակալող բրիտանական զինուած ուժերի գլխաւոր հրամանատար, Բաքուի զօրավար-նահանգապետ Ուիլիըմ Մոնթկոմըրի Թոմսընի, հրամանով բրիտանական առաջին զօրաջոկատը 1918 Օգոստոսի 4ին ժամանել է Բաքու: Զօրացրուելուց յետոյ, Սթոքսը 1919ի աշնանը մնացել է Բաքւում որպէս ոչ-պաշտօնական քաղաքական դիտորդ՝ նախքան Նոյեմբերին Օլիւըր Ուորտրոփի առաքելութեանը կցուելը: Ջեմիլ Հասանլիի վկայութեամբ Սթոքսը կարեւոր օղակ էր բրիտանական առաքելութեան եւ Ադրբեջանի կառավարութեան միջեւ կապերի ապահովման, նրա շահերի ներկայացման տեսանկիւնից[14]:

Երբ Սթոքսը 1920 Մարտին վերադառնում է Լոնդոն արձակուրդն անցկացնելու, նա իր առաջնահերթ գործերից համարում է միջնորդութիւնը՝ Վրաստանի եւ յատկապէս Ադրբեջանի անկախութեան ճանաչման հարցում: Մարտի 21ին ներկայացուած ընդարձակ զեկոյցում, նա դժգոհութիւն էր յայտնում ֆրանսացիների յարուցած խոչընդոտներից, եւ մասնաւորապէս նրանից, որ Թիֆլիսում ֆրանսական ռազմաքաղաքական ներկայացուցչութիւնը հայերին խորհուրդ էր տուել մերժել տարածաշրջանային համադաշնութեան գաղափարը, ինչպէս եւ բրիտանական միջնորդութիւնը հայ-ադրբեջանական վէճերի կարգաւորման հարցում: Սթոքսը բրիտանական կառավարութեան ահազանգում էր, որ միացեալ հայ-ֆրանսական

---

[14] Ադրբեջանի արտգործնախարարի եւ Խան-Խոյսկու հետ քննարկելով Չիչերինի 1920 Յունուարի 2ի պաշտօնագիրը, որում առաջարկուել է դաշնակցել Գրիգորի ընդդէմ Դենիկինի, որին ի պատասխան Ֆաթալի Խան-Խոյսկին Յունուարի 14ին հաւաստիացրել է, որ Ադրբեջանը չի խառնւում Ռուսաստանի ներքին գործերին (Jamil Hasanli, *Foreign Policy of the Republic of Azerbajdan: The Difficult Road to Western Integration,* Routledge Taylor Francis Group, London and New-York, 2016, էջ 147, 331, 356): Իսկ արդէն 1920 Մարտին Չիչերինին ուղղուած ճեպագրում Ադրբեջանի դեմոկրատական հանրապետութեան արտգործնախարար Խան-Խոյսկին յայտնել էր, որ Սպիտակ շարժմանը համատեղ հակազդումը հնարաւոր է միայն Խորհրդային Ռուսաստանի կողմից Լեհաստանի եւ Էստոնիայի նման ԱԴՀ ճանաչման պայմանի հիման վրայ (Михайлов Вадим Викторович, Правительство Азербайджанской Демократической Республики и лидеры белого движения в России: Военно-политические отношения в 1918–1919 годах (Վադիմ Վիկտորովիչ Միխայլով, Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան կառավարութիւնը եւ Ռուսաստանում սպիտակ շարժման առաջնորդները: Ռազմա-քաղաքական յարաբերութիւնները 1918-1919 թթ.), *Вестник Северного (Арктического) федерального университета. Серия: Гуманитарные и социальные науки. История и археология* (Հիւսիսային [Արկտիկական] դաշնակցային համալսարանի բանբեր. Սերիա: Հումանիտար եւ հասարակական գիտութիւններ: Պատմութիւն եւ հնագիտութիւն), 2:2016, էջ 50):

քարոզչութիւնը արուել է դաշնակիցներին համոզելու աւելի մեծ նախընտրելիութեամբ վերաբերուել հայերին: Ըստ Սթոքսի, եթէ Բրիտանիան ձգտում է անդրկովկասեան համադաշնութեան եւ կարճ, ուղիղ ճանապարհի դէպի Պարսկաստան, որպէսզի պատնէշ ստեղծի նաեւ բոլշեւիզմի դէմ, ապա իրենց պէտք է ինքնահաստատուել, վերջ դնելով իրենց դաշնակիցների մեքենայութիւններին եւ թշնամական գործողութիւններին Բրիտանիայի նկատմամբ: Այդ նպատակով Սթոքսը առաջարկում էր երեք պետութիւններին օգնել քաղաքացիական ծառայողներով, զինուորական հրահանգիչներով, զէնքով, ռազմամթերքով եւ հանդերձանքով, ինչպէս եւ խորհուրդներով այն հարցերում, որոնք կարող են իրենց վնասել կապուած բոլշեւիկների հետ գործակցութեան ձգտող ուժերի հետ: Սակայն Բրիտանիայի արտգործնախարար Ճորճ Նաթանիել Քըրզընը Սթոքսի առաջարկները ընդունելի չի համարում, ասելով, թէ նա իր գտնուած երկիրը համարում է հենց տիեզերքի կենտրոնը: Տպաւորութիւն է առաջացել, թէ իրենք այլ բան չունեն մտածելու, բացի Վրաստանից եւ Ադրբեջանից, իսկ իրենք չունեն անսահմանափակ աղբիւրներ, որպէսզի վատնեն նրանց վրայ[15]: Սթոքսի յուշագրում յորդորւում էր միջոցներ ձեռնարկել ապահովելու համար Անդրկովկասում ֆրանսական զինուորական առաքելութեան հրամանատար գնդապետ Փիէր-Օկիւսթ Շարտինյիի հեռացումը: Ըստ Սթոքսի Շարտինյին ոչ միայն ուժեղ հայամէտ էր, այլեւ խիստ հակամահմեդական, որի հետ համերաշխուել էր Բրիտանիայի արտգործնախարարութեան աշխատակից Ռոնըլտ ՄըքՏոնըլը[16]:

1920 Ապրիլին Լոնդոնում եղած ժամանակ Սթոքսը հանդիպում է ԱԳ փոխնախարար Ջոն Էնթոնի Սեսիլ Թիլլիի հետ եւ շարունակում ճնշում գործադրել ԱԳՆի վրայ՝ Հայաստանին եւ Ադրբեջանին զէնք տալու հարցում, դէմ արտայտուելով միայն Հայաստանին զէնք մատակարարելուն: Սթոքսը յամառում է Ապրիլի 3ին ԱԳՆից ստացած առաջարկին՝ վերադառնալ Անդրկովկաս, որպէսզի փոխարինի հիւանդացած Ուորտրոփին, ասելով, որ իր համար այդ նշանակումն անօգուտ կը լինի, եթէ միայն հայերը զէնք պէտք է ստանան: Սթոքսին անհանգստացնում են Թիլլիի բացատրութիւնները, թէ ինչպիսին էլ որ լինեն Բրիտանիայի գործողութիւնները, արդէն ընդունուած է որոշում՝ հայերին ինքնապաշտպանութեան համար միջոցներ տրամադրուեն եւ թէ ռազմական մատակարարումի առումով Հայաստանի շահերը առաջնային պէտք է լինեն: Սթոքսը հակա-

---

[15] Р. Ованнисян, *Межгународные отношения Республики Армения 1918-1920 гг.*, Пер. С англ. Г. Махмуряна (Ռ. Յովհաննիսեան, Հայաստանի Հանրապետութեան միջազգային յարաբերութիւնները 1918-1920 թթ., անգլ. թարգմ.՝ Գ. Մախմուրեան, Տիգրան Մեծ, Երեւան, 2007, էջ 544. նաեւ՝ Ռ. Յովհաննիսեան, *Հայաստանի Հանրապետութիւն, Լոնդոնից Սեւր. Փետրուար-Օգոստոս, 1920. հտր. III*, Տիգրան Մեծ, Երեւան, 2015, էջ 405:

[16] Յովհաննիսեան, *Հայաստանի, հտր. III*, էջ 405:

ճարում է, թէ նման քաղաքականութիւնը «*Ադրբեջանը կը նեփի թուրքերի գիրկը*» եւ քանի որ ադրբեջանցիները վախենում են, որ իրենք կը թողնուեն հայերի փխրուն ողորմածութեանը, դա կը յանգեցնի առճակատման եւ թուրք-ադրբեջանական համատեղ յարձակմանը: Այդպիսով, զէնքի մատակարարումները միայն հայերին իրականում կը լինի շատ վատ ծառայութիւն նրանց, հաշուի չառած ողջ բրիտանական ազդեցութեան վերացումը Բաքում[17]: Սթոքսի այս տեսակէտը բաւարար եղաւ, որ Քըրզընի հետ զրոյցից յետոյ որոշուի զէնքի որոշ քանակութիւններ տեղաբաշխել թէ՛ Ադրբեջանում եւ թէ՛ Վրաստանում: Սթոքսը կարծում էր, որ Հայաստանը գոյատեւման շահերից ելնելով պէտք է բարեկամանայ Ադրբեջանի եւ Վրաստանի հետ, ինչպէս նաեւ հաւասարապէս զինուի, ինչը իբր կարող էր նպաստել նրանց մերձեցմանը, որին Մերձաւոր Արեւելքում եւ Սեւ ծովի շրջանում անգլիական գլխաւոր հրամանատար Ճորճ Ֆրենսիս Միլնը կտրուկ դէմ էր[18]:

1920 Յունիսի 11ին բրիտանական դահլիճի որոշմամբ, որոշ դադարից յետոյ Սթոքսը վերադառնում է Կովկաս՝ Վրաստանի կառավարութեան հետ Բաթումի քաղաքը եւ շրջակայքը վրացիներին յանձնելու համար պայմանագիր կնքելու, պայմանով, որ Հայաստանը եւ Ադրբեջանը ազատ տարանցման իրաւունք ունենան անդրկովկասեան երկաթգծով եւ Բաթումի նաւահանգստից օգտուելու ազատ իրաւունք[19]:

1920 Յունիսի 14ին Բրիտանիայում Վրաստանի դեսպան Դաւիդ Գամբաշիձէի ընկերակցութեամբ մեկնելով Լոնդոնից եւ Յունիսի 24ին ժամանելով Բաթումի, եւ նորից Սեպտեմբերի կէսերին Անդրկովկասից վերադառնալով Լոնդոն, այդ ողջ ընթացքում Սթոքսը արդէն հասցնում է դառնալ Անդրկովկասում համախոհների ամենամեծաթիւ խումբ ունեցող եւ Դաշնակիցների ամենաազդեցիկ ներկայացուցիչը, որը մեծ կապեր էր պահպանում Բրիտանիայի մայրաքաղաքում: Այնտեղ նրան համարում էին Կովկասի գծով ամենագիտակ սպան՝ ***«ճշմարտութեան վերջին խօսքը»***, որի գործունէութեան հիմքում բրիտանական շահերն էին, իսկ սովորական դարձած հակառակորդը Ռուսաստանն էր: Ըստ Սթոքսի, Կովկասում Ռուսաստանի առաջխաղացման դէմն առնելու համար անհրաժեշտ էր ստեղծել հակառուսական համադաշնութիւն՝ դրա մէջ ներառելով առաջին հերթին Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի հանրապետութիւնները, Դաղստանը: Հետազօտող Դմիտրի Սեմուշինը հետաքրքիր եզրայանգման է գալիս, որ 1920ի աշնանը ՀՀ շուրջ ռազմաքաղաքական ճգնաժամի գործընթացում Սթոքսի դիրքորոշման փոփոխութիւններով

---

[17] Ованнисян, էջ 545:

[18] Նոյն:

[19] Նոյն, էջ 527. նաեւ՝ Յովհաննիսեան, *Հայաստանի, հտր. III*, էջ 129:

կարելի է դատել բրիտանական քաղաքականութեան շրջափոխումն ու փոխակերպումը՝ կովկասեան տարածաշրջանում:

Սթոքսը կարծում էր, որ Բաթումիի յանձնումը Վրաստանին եւ բրիտանական զօրքերի դուրսբերումը Բաթումից դիտուելու է որպէս Հայաստանի եւ Վրաստանի վերջնական լքում: Նա կարծում էր որ այդ դէպքում այդ հանրապետութիւններին պէտք է ուղերձով դիմել, որ նրանք շարունակելու են ստանալ ամբողջ հնարաւոր բարոյական եւ քաղաքական աջակցութիւնը, պնդել նաեւ, որ նրանց շնորհիւ իրաւաբանական տեսակէտից ճանաչում կը ստանան եւ որ վրացիներին կը ցուցաբերուի օգնութիւն իրենց անկախութիւնը պաշտպանելու համար՝ մատակարարելով անհրաժեշտ քանակի զէնք ու զինամթերք: Սթոքսը գտնում էր, որ քաղաքական նկատառումներից միանգամայն զատ, այս նախաձեռնութիւնները պէտք է դիտարկուեն մարդասիրական տեսանկիւնից: Նա այս օգնութիւնը տեսնում էր իբրեւ Հայաստանն ու Վրաստանը պաշտպանելու միջոց՝ այն սարսափներից ու թշուառութիւնից, որոնք ուղեկցում են բոլշեւիզմի տարածմանը, եւ ինչը անկասկած, հենց կը դառնայ այդ երկրների ճակատագիրը, եթէ նրանք մնան առանց աջակցութեան[20]:

Միւս կողմից, ֆրանսացիները Բաթումի կապակցութեամբ դժգոհ են մնում բրիտանացիներից, եւ չնայած Յուլիսի 25ին Ալեքսանդր Միլերանի կառավարութիւնը համաձայնուել էր Դաշնակից տէրութիւնների կայազօրը Բաթումից հանելու եւ նահանգը Վրաստանին յանձնելու առաջարկի հետ, սակայն պահանջել էր, որ Թիֆլիսի ֆրանսական յանձնակատարը եւս Սթոքսի հետ հաւասար տեղ ունենայ Վրաստանի կառավարութեան հետ բանակցութիւններում: Սակայն այդպէս չեղաւ. այդ մասին կոմս Տամիէն դը Մարթէլը չտեղեկացուեց, եւ միայն Յուլիսի 2ին է իրազեկւում Սթոքսի քայլերի մասին, երբ արդէն բանակցութիւնները աւարտուած էին, իսկ Մարթէլի ցանկութիւնը՝ տեսնել համաձայնագրերի պատճէնները, Սթոքսը մերժում է: Նա միայն Յուլիսի 6ին իր արտգործնախարարութիւնից հրահանգ ստանալով, համաձայնւում է դաշնակից կառավարութեան ներկայացուցչին այդ փաստաթղթերը ցոյց տալ[21]:

Բրիտանական քաղաքականութեան հաշուարկուած վայրիվերումները եւ հենց շրջափոխումներն էլ որոշակի օրինակ դարձան բրիտանական արտաքին քաղաքականութեան երկակիութեան եւ՝ կեղծիքներով ուղեկցուող խորամանկ յօրինուածքներին:

ՍԹՈՔՍԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Եւ այսպէս, գնդապետ Սթոքսը, որը նշանակուել էր Անդրկովկասում անգլիական գերագոյն ռազմական յանձնակատար, Հայաստանի համար

---

[20] Յովհաննիսեան, *Հայաստանի, հտր. III*, էջ 439:

[21] Նոյն, էջ 439-40:

ճակատագրական դարձած թուրք-հայկական պատերազմի ամենալարուած պահին՝ 1920 Հոկտեմբերի 15ին Թիֆլիսից ժամանում է Երեւան: Թուրքերը Սթոքսի Երեւանում յայտնուելու պահին արդէն գրաւել էին Սարիղամիշը: Հայերը յայտնուել էին ծանր պաշտպանական, քան յարձակողական դիրքերում: Ստեղծուել էր պահ թէ ի՛նչ անել, ուր գնալ՝ շարունակե՞լ պատերազմը թէ՞ հաշտուել, որոշակի փոխզիջումներով գնալ դէպի Թուրքիա՞, թէ՞ այս կամ այն պայմաններով բոլշեւիկների հետ լեզու գտնել, կամ էլ փորձել ամէն գնով պահպանել սեփական իշխանութիւնը[22]:

Այս պահին արդէն Եւրոպայի դաշնակից երկրներում, մասնաւորապէս Բրիտանիայի քաղաքական շրջաններում աստիճանաբար ներքուստ հասունացան ապագայ հայ-թուրքական հաշտութեան պայմանագրի չափանիշերը, որոնք առիթ դարձան Սեւրի որոշումների վերանայման, եւ փոփոխուած կամ ակնկալուած իրադրութեան նոր պայմաններում իրագործելու այն, ինչ աւելի շատ էր բխում նրանց աշխարհաքաղաքական շահերից՝ հաշտուել խորհրդային նոր իրողութեան հետ եւ Հայաստանը որպէս խաղաքարտ թողնել հնարաւոր ապագայի նոր խաղարկումների համար:

Այդ ժամանակ դա միայն Բրիտանիայի մօտ չէր նկատւում. Դաշնակիցների երկրների մի մասի մօտ նկատուեցին խոր տարակարծութիւններ՝ Արեւելեան Հարցում եւ առաջադրուեցին նոր մօտեցումներ Սեւրի պայմանագրի փոփոխման համար, Թուրքիային զիջումներ կատարել նրա հետ մերձենալու գնով՝ Հայաստանի հաշուին ձեռք բերելով առեւտրատնտեսական եւ քաղաքական շահաբաժիններ: Արդէն հասունանում էր մի գաղափար, որ դա ձեռնտու կը լինի նաեւ հայերին եւ յոյներին պատին դէմ արած քեմալական Թուրքիային: Վերջինիս ձեռնտու էր արգելափակել եւ տարածքային տեսանկիւնից սահմանափակել ՀՀ հնարաւոր ընդարձակումները եւ պատին դէմ անել: Թուրքիայի հետ անշահաւէտ ու անպատուաբեր պայմանագիրը իհարկէ աւելի շահաւէտ էր համարւում, քան բոլշեւիկների, բայց վերջինս էլ արդէն չէր անտեսւում որպէս գործօն:

Սթոքսը այս նոր իրականութիւնների դաշտում էր գործում: Բրիտանական դահլիճին համար արդէն աւելի ձեռնտու էր համաձայնութեան գնալ մոլի ազգայնական թուրքերի հետ, քան խորհրդային կողմի: Յիրաւի, խորհրդամէտ ընտրութիւնը ընդունելի եւ ձեռնտու չէր բրիտանացիներին: Դրանով, նրանք գիտակցաբար եւ հաշուարկուած հաւանութիւն էին տալիս ապագայ Ալեքսանդրապոլի հաշտութեանը, եւ Հայաստանին թողնում քեմալական Թուրքիայի ողորմածութեան եւ ազդեցութեան ոլորտում: Բրիտանիան համոզուած էր, որ Թուրքիայի հետ իրենց փոխպայմանա-

[22] Дмитрий Семушин, «Феномен полковника Стокса», либо как «англичанка гадит» Армении (Դմիտրի Սեմուշին, «Գնդապետ Սթոքսի երեւոյթը», կամ ինչպէս «Անգլուհին թքում է» Հայաստանի վրայ)՝ https:// tvesti. ru/fenomen-polkovnika-stoksa-libo-kak-anglichanka-gadit-armenii.html, մատչում՝ 10.11.2021:

տրուածութիւնը կայացած է, իսկ բոլշեւիկների հետ խնդիրներ կան: Բրիտանիան կարծում էր որ Հայաստանի նկատմամբ թուրքական հովանաւորչութեան հաստատման գագաթնակէտին Խորհրդային Ռուսաստանին այլ բան չի մնայ, քան զաւթել մնացած Հայաստանը: Անդրկովկասում այս ողջ իրարանցման համայնապատկերի բնութագրականը դարձաւ հայկական դժուարութիւնների նկատմամբ գրգռուածութեան ուժեղացումը, իսկ հայերին կարծես թէ արդէն բրիտանական կողմը հենց այդ իմաստով էր ընդունում: Այն ուժեղացաւ յատկապէս 1920ին Սեպտեմբեր-Դեկտեմբերի թուրք-հայկական պատերազմում ՀՀի կրած պարտութիւնից յետոյ:

1920ի երկրորդ կէսից սկսած Հայաստանը բոլոր կողմերից յայտնուել էր ռազմաքաղաքական շրջափակման ճիրաններում: ՀՀն ձգտում էր լուծել գրեթէ անիրագործելի դարձած բազմաթիւ հարցերը՝ տարածքային, պարէնային, վառելիքի, ինչպէս նաեւ ցանկալի վրաց-հայկական դաշինքի պարագայում կանխել թէ՛ բոլշեւիկեան յարձակումը եւ թէ՛ չէզոքացնել այլ սպառնալիքները:

ՀՀ ԱԳ նախարարին ուղղած 1920 Հոկտեմբերի 1ի (N 443) զեկուցագրում Վրաստանում ՀՀ դիւանագիտական ներկայացուցիչ Բեկզադեանը անդրադառնում է ՀՀի վրայ Թուրքիայի յարձակման նպատակների եւ Ռուսաստանի ու Արեւմուտքի երկրների դիրքորոշման: Նա նշելով Սեպտեմբերի 27ին Սարիղամիշի ուղղութեամբ թուրքերի ձեռնարկած յարձակման մասին, տեղեկացնում է նաեւ իր տեսակցութիւնների մասին Հայաստանի Հանրապետութիւնում ՌԽՖՍՀ դիւանագիտական ներկայացուցչութեան ղեկավար, Բորիս Վասիլի Լեգրանի, ինչպէս նաեւ 1920ին ֆրանսական զինուորական առաքելութեան ղեկավար գնդապետ Է. Դի Քորպէյի, ֆրանսական յանձնակատարի փոխանորդ Նեթեմանի, Սթոքսի եւ յունական ներկայացուցիչ Սկերերիսի հետ, նպատակ հետապնդելով ոչ միայն նրանց տեղեկացնել Կարսի ուղղութեամբ գործող Քարաբեքիրի զօրքերի յարձակման, Օլթիի եւ Սարիղամիշի գրաւման, եւ դրանով իսկ ՀՀ համար ճգնաժամային դրութեան ստեղծման մասին, որ այն յանգեցրել է թուրք-բոլշեւիկեան կապի հաստատմանը եւ հայկական ճակատի լուծարմանը, ՀՀում ստեղծուած դրութեան եւ նրանց կողմից ձեռնարկուելիք միջոցների մասին: Բեկզադեանը իր դիմումնագրով ակնկալում էր Դաշնակից զօրքերի հնարաւոր ափհանում եւ շտապ կերպով վառելիքի առաքում: Սակայն, դաշնակիցների ներկայացուցիչները ընդամէնը ուշադրութեամբ ունկնդրում են եւ խոստանում այդ մասին անյապաղ հաղորդել իրենց կառավարութիւններին եւ խնդրել ՀՀ համար այնքան անհրաժեշտ օգնութիւնը: Ընդ որում ... Բեկզադեանը ակնկալում էր յունական մինչեւ 200,000 ծովային զինուժի ափհանում Տրապիզոնի շրջանում, կարծելով որ դա կը հարկադրի թուրքերին ետ քաշել իրենց զօրքերի մի մասը ՀՀի սահման-

ներից: Դա թէ՛ բարոյական, եւ թէ՛ զինուորական առումով մեծ օգնութիւն կը լինէր ՀՀին[23], ինչը սակայն անիրատեսական էր:

1920 Հոկտեմբերի 15ին Տեղեկատու բաժնի վարիչ Արզումանեանը տեղեկացնում է, որ Հոկտեմբերի 3ին Թիֆլիսից Երեւան է ժամանել Սթոքսը, հանդիպումներ ունենում վարչապետ Համօ Օհանջանեանի եւ ռազմական նախարար Ռուբէն Տէր Մինասեանի հետ եւ կասկած յայտնում, որ հայերն իսկապէս ու անկեղծօրէն որոշել են կռուել քեմալիստների դէմ, որ կասկածելի է հայերի որոշումը՝ քշել տաճիկներին Կարսի շրջանից: Ըստ Արզումանեանի Սթոքսը քննադատում է ՀՀի եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ կնքուած Օգոստոսի 10ի համաձայնութիւնը, բացէիբաց տեղեկացնում, որ Բրիտանիան անզօր է իրաւ օգնութիւն հասցնել ՀՀին, եւ թէ՝ ռմբակոծել կամ վերցնել Տրապիզոնը միտք չունի, որովհետեւ Բրիտանիան չի կարող մեծ ուժ հանել տաճկականի դէմ՝ երկրի խորքերը շարժուելու համար, իսկ միայն քաղաքը եւ նաւահանգիստը գրաւելով Բրիտանիան մեծ օգնութիւն չի հասցնի: Սթոքսը մեծ սխալ էր համարում Օգոստոսի 10ին ստորագրած պայմանագիրը բոլշեւիկների հետ: Սթոքսը նշում է, որ վրացիք վախենում են կապուել հայերի հետ, կարծելով, որ դրանով տաճիկներին գրգռում են իրենց դէմ, իսկ տաճիկների հետ թշնամանալ չեն ցանկանում, անգամ ենթադրում, որ վրացիները թուրքերի հետ համաձայնութեան են եկել, այլ բացատրութիւն չտալով քեմալականների կողմից Արտահանի գրաւման փաստին, այդուհանդերձ յորդորելով աւելի սերտ համագործակցել նրանց հետ: Սթոքսը նաեւ այն համոզմունքն է յայտնում, որ հայերը վարում են հակամուսուլմանական քաղաքականութիւն եւ միշտ կռուի մէջ են մուսուլմանների հետ: Նա անհրաժեշտ է գտնում վերջ տալ այդ քաղաքականութեանը, որով պէտք է Անդրկովկասում ստեղծել մի համադաշնութիւն, որը վերջ կը դնի նման քաղաքականութեանը, կ'որդեգրուի հաշտութեան ուղին, որով եւ կը լուծուեն հայ-ադրբեջանական վէճերը: Սթոքսը՝ բերելով Զանգեզուր-Ղարաբաղի եւ Նախիջեւանի օրինակը՝ փորձելով զէնքի միջոցով լուծել հարցը, գտնում էր որ դա վատ հետեւանք կ'ունենայ ՀՀի համար, ինչն հնարաւոր կը լինի ժամանակի ընթացքում խաղաղ եղանակով՝ իբր թէ անդրկովկասեան համադաշնութեան ստեղծմամբ, որով կը լուծուեն սահմանային վէճերը: Բեկզադեանը հակադարձելով, յայտնում է, թէ ՀՀ նախարարապետը պաշտպանում է իրենց կառավարութեան տեսակէտը, որ նախ պէտք է լուծուեն բազում սահմանավէճերը, այնուհետեւ միայն կարող է խօսք լինել համադաշնութեան մասին, որին Սթոքսը կտրուկ հակառակւում է:

---

[23] *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ., քաղաքական պատմութիւն. փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, պատ. խմբ.՝ Գ. Գալոյեան, Վ. Ղազախեցեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2000, էջ 296-97:

Օհանջանեանն ի պատասխան պարզաբանում տալով, Խորհրդային Ռուսաստանի հետ ժամանակաւոր համաձայնութիւնը համարում է հանգամանքներից եկող ստիպողական քայլ, հասարակ զինադադարի մի ակտ, տեղեկացնելով այն հանգամանքների մասին, որոնք ստիպել են ՀՀ կառավարութեանը կնքել այն, իսկ Վրաստանի հետ ջանքերը եւ տարածքային հարցերի լուծման կարեւորութիւնը որպէս դաշնային որեւիցէ համակարգի նախապայման: Չնայած Սթոքսի հանդիպման ժամանակ արուած կոչին՝ հրաժարուել հակամահմեդական կեցուածքից, որից ՀՀ ղեկավարները անհանգստացած էին, հանդիպումը աւարտում է Սթոքսի համար ցանկալի ելքով. Օհանջանեանի կառավարութիւնը կրկին ցուցաբերում է պատրաստակամութիւն դիմակայել ե՛ւ թուրքերին ե՛ւ բոլշեւիկներին, քանի որ ամբողջ հայ ժողովուրդը ոտքի է կանգնել եւ պիտի յաղթի թշնամուն, եթէ ինքը չի ուզում ոչնչանալ[24]:

Իսկ իրական փաստերը հենց դա էլ հաստատում են: 1920 Հոկտեմբերի 5ին Բեկզադեանը ԱԳ նախարարին տեղեկացնում է Թիֆլիսից Երեւան ժամանած Սթոքսի հետ իր տեսակցութեան մասին, որին ներկայ էր նաեւ վարչապետ Օհանջանեանը. Բեկզադեանը տեղեկացնում է, որ փորձել են տեղեկանալ նրանցից ակնկալուող աջակցութեան մասին: Դրան Սթոքսը պատասխանել էր, որ ինքը շարունակ հեռագրում է օգնութեան մասին, եւ մինչեւ հիմա պատասխան չի ստացել, որը նրա կարծիքով նշանակում է, որ Եւրոպան կա՛մ անկարող է օգնել կա՛մ չի ցանկանում, երկու դէպքում էլ սակայն հետեւանքը պարզ է, որ դուք ազատ էք անելու այն ամէնը, ինչ-որ հարկաւոր կը գտնուի ժողովրդին փրկելու համար: Սթոքսը տեղեկացնում է նաեւ, որ նմանատիպ կարծիքներ են յայտնել նաեւ Տը Քորպէյը, Նեթեմանը: Բեկզադեանը արձագանգում է, թէ այդ բոլորից յետոյ եթէ ուժ ունենայինք, կը կռուէինք եւ կը յաղթէինք, եթէ ոչ՝ մնում է միջոցներ ձեռք առնել համաձայնութեան գալ Թուրքիայի հետ, ակնարկելով, որ Երեւանում էլ են արդէն այդպէս մտածում, որ այդ մասին հասկացրել է ՀՀ խորհրդարանի աւագ քարտուղար, հասարակական գործիչ, գրող, ՀՅԴ անդամ Յակոբ Տէր Յակոբեանը (Յ. Իրազեկ): Այդ մասին տեղեկանալով, Սթոքսը յայտնում է Թեկզադեանին, թէ իրենք չեն կարող միջնորդի դեր յանձն առնել հայերի եւ Քեմալի միջեւ, որովհետեւ չեն ճանաչում պաշտօնապէս!: Բեկզադեանը եզրայանգման է, որ իրենց մնում է համաձայնութեան գալ տաճիկների հետ, իհարկէ հնարաւոր տագնապներով[25]:

Հոկտեմբերի ընթացքում իրապէս պարզւում է նաեւ, որ Դաշնակից պետութիւնները ՀՀին որեւիցէ փաստացի ռազմական կամ քաղաքական

---

[24] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 149-154: ց. 2, գ. 94, թ. 1-3. նաեւ՝ *Յառաջ*, 5 եւ 6 Հոկտեմբերի 1920, Երեւան:

[25] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 92, թ. 11-14:

օգնութիւն ցոյց տալու մտադրութիւն իրապէս չունեն: Ալեքսանդր Խատիսեանի եզրայանգմամբ.

> Միակ իրական հետեւանքը այն բոլոր դիմումներուն, որոնք կատարուեցան դաշնակիցներու Թիֆլիսի ներկայացուցիչներուն, եղաւ այն, որ անգլիական բարձր յանձնակատար Սթոքսը անցաւ պտոյտի՝ Կարսի ճակատը եւ գտաւ այն ամուր (գոնէ այսպէս յայտարարեց հայկական իշխանութիւններուն): Ոչ մէկ ուրիշ օգնութիւն եւրոպական իշխանութիւնները Կովկասի մեջ ցոյց չտուին Հայաստանին[26]:

Սթոքսը Անդրկովկասում եւ Հայաստանում Մեծ Բրիտանիայի ներկայացուցչութեան անդամ, կապիտան, հայերէնին լաւ տիրապետող Ջորջ Կրէյսիի հետ միասին Կարս կատարած ստուգիչ այցից յետոյ, որտեղ նրան հրամանատարներն ու զինուորները, Սիլիկեանը լաւ ընդունելութիւն են ցոյց տալիս, չմոռանալով ռուսատեաց երեւալ, Հոկտեմբերի 6ին Լոնդոն ուղարկած զեկոյցում յայտնում է, որ Հայաստանը չնայած Սարիղամիշի կորստին, շարունակում է ամուր դիրքեր գրաւել բոլշեւիզմի դէմ, սակայն վառելիքի պակասն ու Ադրբեջանի կողմից ճնշումը խանգարում են դրան: Այնուհետեւ կեղծելով իրողութիւնները, յայտնում, թէ Յուլիսին ստացուած բրիտանական ռազմամթերքի շնորհիւ (ինչն իրականում անորակ էր - Վ.Վ.), իբր թէ կանոնաւոր բանակը հաւանաբար մէկ շաբաթից յարձակման կ'անցնի[27], եզրայանգելով, որ եթէ թուրքերին ու ռուսներին յաջողուի Հայաստանի վրայով ձեռքերն իրար միացնել, իր կարծիքով, բրիտանական կառավարութիւնը պէտք է բծախնդրօրէն նկատի առնի Հայաստանին օգնելու հնարաւոր ամէն ինչ[28], չնայած Սթոքսն այնքան էլ համոզուած չէր դրանում:

Իսկ արդէն 1920 Հոկտեմբերի 13ին ՀՀ ԱԳ նախարարը տեղեկացնում է դիւանագիտական հաւատարմատարին Լեգրանի կողմից ներկայացուած նոտայի բովանդակութեան մասին, ըստ որի ՀՀն պէտք է ապահովէր բոլշեւիկեան զօրքերի եւ ռազմամթերքի տարանցման իրաւունք՝ Հայաստանի վրայով Տաճկաստան եւ հրաժարուէր Սեւրի պայմանագրից[29], հրաժարուէր դէպի Դաշնակիցներն ունեցած կողմնորոշումից, տար ա-

---

[26] Ալ. Խատիսեան, *Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը*, «Համազգային» հայ մշակութային ընկերակցութիւն, տպ. Համազգային, Պէյրութ, 1968, էջ 230:

[27] Խօսքը մասնաւորապէս վերաբերում է 1920ի թուրք-հայկական պատերազմի Կարսի ճակատում Հոկտեմբերի 14ին հայկական ուժերի կողմից ձեռնարկուած հակայարձակման անցնելու ձախող փորձին, որը նախորդեց Կարսի Հոկտեմբերի 30ի անկմանը: Հայկական բանակը, չնայած յամառ մարտերին, կանգնեց մի շարք դժուարին խնդիրների առաջ, որոնցից առաջինը զօրքերի համալրումն էր:

[28] Ռ. Յովհաննիսեան, *Հայաստանի Հանրապետութիւն. սալի եւ մանգաղի միջեւ. մասնատում եւ խորհրդայնացում. հտր. IV*, էջ 241:

[29] *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920*, էջ 303:

զատ տարանցման հնարաւորութիւն Ռուսաստանից Թուրքիա, որը յենք էր ստեղծում ընդդէմ Դաշնակիցների ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման:

1920ի աշնանը Հայաստանի շուրջ աշխարհաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխուել էր, որով առաջացել էին նոր խնդիրներ, ինչն էլ յայտնուեց Սթոքսի բրիտանական ծրագրերի կիզակէտում:

Այդուհանդերձ, փաստը մնում էր փաստը. դաշնակիցների հնարաւոր ռազմական միջամտութեան հարցով Եւրոպայում հայերի գործադրած ջանքերը ապարդիւն էին անցնում: Դաշնակից տէրութիւնները, որոնք Միացեալ Հայաստան էին ձեաւորել թղթի վրայ, հետեւողականօրէն մերժում էին զինուած ուժեր յատկացնել այդ որոշումն իրագործելու համար, ինչը ցայտուն դրսեւորուեց նաեւ 1920ի աշնան աղէտալի պատերազմի ժամանակ: Նրանց վրայ ոչ մի ազդեցութիւն չէին թողնում Աւետիս Ահարոնեանի եւ միւսների այն պնդումները, թէ՝ ՀՀի դէմ յարձակումը յարձակում է նաեւ Դաշնակից տէրութիւնների եւ Սեւրի դաշնագրի վրայ: Ամէն ինչ ամէն անգամ աւարտւում էր տարբեր երկրների այսպէս կոչուած հայասէր գործիչների ու կազմակերպութիւնների անուժ դիմումներով եւ կոչերով՝ իրենց կառավարութիւններին[30]:

1920 Նոյեմբերի 23ին Թիֆլիսում Բեկզադեանը ԱԳ նախարարին ուղարկած գաղտնի գրութեան մէջ տեղկացնում է Սթոքսի հետ ունեցած Հոկտեմբերի 14ի տեսակցութեան եւ Արդահանի անցքերի շուրջը Սաբախտարիշվիլու հետ ունեցած խօսակցութեան մասին: Այնուհետեւ նա տեղեկացնում է Նեթեմանի եւ Քորպէյի հետ ունեցած հանդիպման մասին, որոնց իրազեկել էր ՀՀ դրութեան եւ խնդրել վրացական աջակցութիւն, որի ժամանակ Քորպէյը հաւաստիացրել էր, որ ինքը խօսել է այդ առիթով Ռամիշվիլու հետ, որը խոստացել էր ամենայն աջակցութիւն ցոյց տալ[31]: Բեկզադեանը կառավարութեանը յայտնում է նաեւ Հոկտեմբերի 16ին գնդապետ Զինկեւիչի հետ ունեցած հանդիպման մասին, որը յայտնել էր իր բարեացակամ վերաբերմունքը Հայաստանի հանդէպ եւ խոստացել հնարաւոր աջակցութիւն ցոյց տալ Վրանգէլի կողմից: Բեկզադեանը նշում է նաեւ Հոկտեմբերի 17ին Սթոքսի հետ ՀՀ զինուորական նախարարի Թիֆլիս կատարած այցելութեան մասին, որը նոյն օրուայ երեկոյ-

---

[30] ...Ինչպէս դա կար եւ 1915ի աղէտի օրերին, այնպէս էլ 2020ի աշնան պատերազմի ժամանակ Ադրբեջան-Թուրքիայի դաշինքի հետ, երբ պետութիւնները, ՄԱԿը եւ գրեթէ բոլոր միջազգային կազմակերպութիւնները բաւարարուեցին Արցախի հարցում հռչակակագրային բնոյթի յայտարարագրերով, կոչերով եւ որոշումներով, եւ անտեսելով ազգերի ինքնորոշման հիմնարար սկզբունքը, գործնական ոչ մի աջակցութիւն չցուցաբերեցին թէ՛ պատերազմի կանխման, եւ թէ՛ արցախեան հիմնախնդրի խաղաղ կարգաւորման ու լուծման գործում, եւ լքեցին Հայաստանին, ինչպէս եւ 1920ի թուրք-հայկական պատերազմի ժամանակ:

[31] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 440, թ. 47:

եան տեսակցութիւն է ունենում Ռամիշվիլու եւ Սթոքսի հետ, միւս օրը՝ Սաբախտարիշվիլու հետ իր ներկայութեամբ[32]: Բեկզադեանը դժգոհում է Գէորգաձէին ՀՀում դիւանագիտական ներկայացուցիչ նշանակուելու կապակցութեամբ, ընդգծելով, որ հայ հանրութիւնը երբեք չի կարող մոռանալ, որ դա այն նոյն Գէորգաձէն է, որը 1918ի Հայաստանի վրայ արշաւող Խալիլ փաշային ամենայն յաջողութիւն էր ցանկանում: Նա իր կասկածն է յայտնում, որ այդպիսի անձնաւորութեան դիւանագիտական ներկայացուցիչ նշանակելը հազիւ թէ կարողանայ նպաստել այն բարեկամական կապերին, որոնց ձգտում են: Սաբախտարաշվիլին իր համաձայնութիւնն է արտայայտում եւ նշում որ իրենք իրօք սխալ են գործել, բացատրելով դա նրանով, թէ իբր այդ հանգամանքի վրայ բնաւ չեն մտածել եւ տեսակցութիւնը վերջանալուց կէս ժամ յետոյ հեռախօսով յայտնում, թէ Գէորգաձէի Երեւան գնալը յետաձգւում է[33]: Բեկզադեանին սակայն առաւօտեան կրկին հեռախօսով զանգահարում է մտափոխուած Սաբախտարաշվիլին, խնդրելով նախապէս կառավարութեան կարծիքը իմանալուց յետոյ, Գէորգաձէին անցաթուղթ տալ Երեւան մեկնելու, աւելացնելով, որ Գէորգաձէին փոխարինելու համար այժմ դեռ ոչ ոքի ի նկատի չունեն, ուստի խնդրում են թոյլ տալ նրան Երեւան գնալ ոչ իբրեւ դիւանագիտական ներկայացուցիչ, այլ իբրեւ կառավարութեան պատգամաւոր՝ յատուկ լիազօրութիւններով[34]:

Բեկզադեանը նաեւ տեղեկացնում է Նեթեմանի հետ Հոկտեմբերի 20ի տեսակցութեան մասին, հարցնելով նրա կարծիքը թէ կարո՞ղ է արդեօք Ֆրանսան ազդեցութիւն գործել Լեհաստանի վրայ, որպէսզի վերջինս իր եւ Սովետական Ռուսաստանի հետ կնքուելիք հաշտութեան պայմանագրի մէջ մի կէտ մտցնի Հայաստանի տարածքի անձեռնմխելիութեան մասին: Նեթեմանը պատասխանել է, որ այդ խնդիրը նա այնքան է լուրջ համարում, որ երէկ ունեցել է յատուկ խորհրդակցութիւն եւ շուտափոյթ այդ մասին տեղեկացրել է իր կառավարութեանը[35]:

Անուժ է լինում նաեւ Սթոքսի նոր միջամտութիւնը, որին Վրաստանի կառավարութիւնը չի արձագանգում: Սթոքսի խորհրդատուութեամբ ՀՀ կառավարութիւնը Լեգրանի գլխաւորած պատուիրակութեանը անընդունելի պայմաններ է առաջադրում եւ խնդիրը առժամանակ փակուղի է մտնում: Այնուհետեւ, ՀՀ կառավարութիւնը ուղղորդւում է սնամէջ բանակցութիւններ վարելու Վրաստանի հետ՝ Խորհրդային Ռուսաստանի դէմ հայ-վրացական ռազմական դաշինք ձեւաւորելու համար, խոստանալով

---

[32] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 47-48. նաեւ՝ Յովհաննիսեան, *Հայաստանի. հտդ. IV*, էջ 240:

[33] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 47-48:

[34] Նոյն:

[35] Նոյն:

աջակցել նաւթի եւ ռազմամթերքի հարցում, ինչպէս նաեւ Վրաստանին համոզել զինակցելու ՀՀի հետ, որոնք սակայն արուել էին՝ առանց Վրաստանի իրական դիրքորոշումը պարզելու: Աւելին, ՀՀ կառավարութիւնը Օհանջանեանի անունից, առանց խորքային քննութեան, անմիջապէս այդ մասին յայտնել է Թիֆլիսի իր դիւանագիտական ներկայացուցիչ Բեկզադեանին, որ Հայաստանը հաւատարիմ կը մնայ Դաշնակիցներին եւ Լեգրանի հետ բանակցաընթացքը կը ձախողի: Վիճակն այնպէս է դասաւորւում, որ Սթոքսը չվստահելով հայկական կողմին, անմիջապէս ժամանում է Երեւան՝ կրկին փորձելով ՀՀ կառավարութեան վրայ ճնշում գործադրել՝ Լեգրանի հետ բանակցութիւնները փակուղի մտցնելու անշեղ նպատակադրումով: Սթոքսը այդ խնդիրը իրագործելու համար Երեւանում մնում է մինչեւ Հոկտեմբերի 17ը եւ աչքի ընկնում հակալեգրանեան քարոզչութեամբ: Այս լարուած վիճակի մասին ուշագրաւ է Լեգրանի՝ Չիչերինին ուղարկած Հոկտեմբերի 24ի հեռագրից մի հատուած.

> Մեր բանակցութիւնները գրաւել են Անտանտի լարուած ուշադրութիւնը: Եկաւ անգլիական կոմիսար Սթոքսը, որը վաղուց չէ, որ մեկնել էր Երեւանից: Մեզ հասած տեղեկութիւնների համաձայն Սթոքսը առաջադրել է անդրկովկասեան ֆեդերացիայի պլան, որի մէջ պէտք է մտնեն, Հայաստանից եւ Վրաստանից բացի, նաեւ Ադրբեջանը, որտեղ, Սթոքսի հաշումներով, մուսաւաթականները շուտով կը գրաւեն իշխանութիւնը եւ կապ կը հաստատեն Դաղստանի հետ: Երեւի այդ կապակցութեամբ է, որ Վրաստանի նախկին ռազմական նախարար Գէորգաձէն մի շարք զինուորականների հետ միասին եկել է Երեւան: Սպասւում է, որ ֆրանսական ներկայացուցիչը եւս կը ժամանի: Սթոքսը Երեւանում թողել է իր մշտական ներկայացուցչին, մի բան, որ առաջ չէր անում: Բացի դրանից, այստեղ կան իտալական եւ ամերիկեան ներկայացուցիչներ[36]:

Երեւանում Սթոքսը զբաղւում է Լեգրանի առաքելութեան ձախողմամբ, որը տարաւ թուրք-հայկական պատերազմի երկարաձգմանը եւ է՛լ աւելի խճճեց ՀՀ ապագայ վիճակը: Սթոքսը յատկապէս պնդեց, որ կառավարութիւնը ետ չկանգնի Սեւրի պայմանագրից: Պատահական չի, որ հայկական յուշագիրը կազմուել էր Սթոքսի մասնակցութեամբ, պահանջելով, որ հայերը պնդեն ՀՀ անկախութեան ճանաչման վրայ մինչեւ Տրապիզոն եւ Էրզրում եղած սահմանով, ներառեալ Սիւնիք-Զանգեզուրով եւ Նախիջեւանով: Սթոքսը առանց հիմքի պնդում էր, որ խորհրդային կողմը քաղաքական ճարպիկ հնարքի է դիմում եւ ուժ չունի խորհրդայնացնել Հայաստանը: Ըստ էութեան Սթոքսը աւելի շատ քեմալականների հետ փոխգործակցութեան կողմնակից էր, քանզի իրօք համոզուած էր, որ քեմալականները բոլշեւիկների հետ գործակցելով ներքուստ հակաբոլշեւիկեան են, այսինքն հակառուսական:

---

[36] ՀԱԱ, ֆ. 1021, ֆ. 64, ց. 2, գ. 11. նաեւ՝ Էդիկ Զոհրաբեան, *1920 թ. թուրք-հայկական պատերազմը եւ տէրութիւնները*, «Ոսկան Երեւանցի» հրատ., Երեւան, 1997, էջ 227:

Ըստ Սեմուշինի, 1920 Նոյեմբերի 14ին ՀՀ նախարարների խորհուրդը որոշում է ԱԳՆի եւ Թիֆլիսի իր ներկայացուցչութեան միջոցով եւ այլ հնարաւոր ուղիներով, օգտուելով Սթոքսի առաջարկած միջնորդութիւնից, բրիտանական արդէն նորացուած եւ փոփոխուած ռազմավարութեան հիմքի վրայ թուրքերի հետ հասնել համաձայնութեան:

Սեմուշինը կարծում է, որ Հայաստանի ղեկավար վերնախաւի այդպիսի շրջադարձը այսպիսով իրականում պայմանաւորուած էր Թուրքիայի նկատմամբ Բրիտանիայի փոփոխուող դիրքորոշմամբ: Մի բան էլ պարզ էր, որ բրիտանացիները թուրքերի հետ սերտ դաշինքի դեռեւ իրաւ հնարաւորութիւններ չէին տեսնում: Դրա կարիքը Քեմալի մօտ առանձնապէս չկար, քանզի այդ պահին դեռ կար դրա գործուն հակաթոյնը՝ բոլշեւիզմը, միաժանակ համոզուած լինելով, որ հայերը թուրք-հայկական պատերազմում ջախջախուելուց յետոյ այլ ընտրութիւն չունեն, սակայն բրիտանացիների յորդորով եկել էին եզրայանգման, որ թուրքերի հետ աւելի ձեռնտու է, իսկ խորհրդային կողմի հետ՝ պարզապէս սարսափելի, ինչը մխրճուել էր ՀՀ կառավարութեան գործելակերպի եւ գիտակցութեան բոլոր ծալքերում: Այդպիսով բրիտանացիները հաւանութիւն են տալիս ապագայ Ալեքսանդրապոլի պայմանագրին, ցանկանալով, որ Հայաստանը անցնի քեմալական Թուրքիայի ազդեցութեան տակ:

Սակայն աշխարհաքաղաքական իրադարձութիւնները այլ կերպ դասաւորուեցին[37]: Դրանով իսկ բրիտանացիներին հաւանաբար աւելի շուտ հետաքրքրում էր հայերին դրդել ընդդէմ բոլշեւիզմի եւ Ռուսաստանի եւ դրանով իսկ նախապատրաստել Սեւրի զրոյացումը, կանխել բոլշեւիկեան ծաւալումը դէպի Արեւելք, հող ստեղծել Քեմալին իրենց կողմը գրաւելու համար, թէկուզեւ հայերին եւ Հայկական Հարցը զոհաբերելու գնով: Այդպէս էին կարծում նաեւ ֆրանսացիները Իզմիր-Զմիւրնիան վերադարձնելով թուրքերին, նպաստելով յոյների դէմ թուրքերի յաղթանակին, խոչընդոտելով յոյներին Մեծ Յունաստանի ստեղծման գործում, կարծելով, որ դրանով կը կարողանան հասնել Քեմալի հետ համաձայնութեան: Դրա տարբերակը պատահեց 1921-22ին Կիլիկիայի աղէտալի դէպքերի ժամանակ, երբ Ֆրանսան[38] առանց հայերին զգուշացնելու Կիլիկիան նուիրաբերեց Թուրքիային[39]:

---

[37] Семушин, համացանցային հրապարակում:

[38] Ֆրանսական դիւանագէտ Անրի Ֆրանքլին-Պույիոնը (1870-1937) Թուրքիայի ԱԳՆ Եուսուֆ Քեմալի հետ 1921 Հոկտեմբերի 20ին կնքեց Անկարայի պայմանագիրը, որով Ֆրանսան *տէ-ֆաքթօ* ճանաչեց Թուրքիայի նոր կառավարութիւնը, եւ 1920-21ի ընթացքում Կիլիկիան զիջուեց Թուրքիային:

[39] Այդ մասին վերջնագրային է Լէոյի եզրայանգումը. «Եւ այսպէսով Ֆրանքլէն Պույիոնը ազատութիւն ունեցաւ մի շարք համաձայնութիւններ կայացնելու Անգորայի հետ, *համաձայնութիւններ, որոնցից մի քանիսը ոչ միայն հակառակ էին Ֆրանսիայի ստորագրած Սեւրի դաշնագրին, այլ եւ ուղնակոխ էին անում անգ-*

Բրիտանիայի արտաքին-քաղաքական շրջադարձը ձեռք բերուեց թուրքերի յաղթանակով հայերի դէմ պատերազմում, սպիտակ բանակների ջախջախմամբ, Էլեֆտերիոս Վենեզիլոսի Յունաստանի չէզոքացմամբ եւ ջախջախմամբ:

Արդիւնքում, ճանապարհ բացուեց Սեւրից Լոզան, Թուրքիայի վերստեղծման համար որպէս թափարգելի Թուրքիայի եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ ճեղքուածքի առաջացման հիմք, ինչի համար վերջինիս արուած «բարեհամբոյր զեղչերը» Բրիտանիային, Ֆրանսային եւ միւսներին կը տային այն, ինչին նրանք ձգտում էին՝ դիրքերի պահպանում Միջագետքում, Եգիտոսում, Հնդկաստանում՝ մուսուլմանական աշխարհի հաշտութեամբ: Այդ իրավիճակի որոշակի արտացոլանքը կայ *Յառաջ*ի 1920 Նոյեմբերի 20ի առաջնորդողում.

> Հայաստանը մեծ պետութիւններից իրաւապէս ճանաչուած պետութիւն է: Եւ այդ ճանաչումն է մեր ժողովրդի գերագոյն միջազգային նուաճումը:
> Հայ ժողովուրդը, որ իր զաւակների միլիոնաւոր զոհերով է ձեռք բերել իր անկախութիւնը, կարող է հաշտուել իր պատմական տարածքի մեծամեծ կրճատումների հետ, կարող է հրաժարուել շատ եւ շատ բարիքներից, բայց մի բան կայ, որի հետ նա երբեք չպէտք է հաշտուի, որից երբեք նա չպէտք է հրաժարուի: Եւ այդ բանը Հայաստանի, իբրեւ անկախ պետութեան, ոչնչացումն է:
> Թող լինի Հայաստանը փոքր, նոյնիսկ շատ փոքր, բայց անկախ պետութիւն:
> Փոքրութիւնը երբեք արգելք չէ ապագայ զարգացման: Փոքր էր Յունաստանը, երբ ստեղծուեց, եւ շատ թոյլ, բայց այժմ արդէն այնքան մեծ է, որ երկիւղ է ներշնչում նոյնիսկ Իտալիայի պէս մի զօրեղ պետութեան: Փոքր էր Սերբիան, բայց այժմ արդէն մի պատկառելի պետութիւն է: Փոքր էր Ռումինիան, բայց այժմ եռապատկել, քառապատկել է տարածքը եւ ուժը:

լիական շահերը: Մարտին եւ Հոկտեմբերին ստորագրւում էին պայմանագրերը Ֆրանսայի եւ Անգորայի միջեւ: Պատերազմական գործողութիւնները երկու կողմերի միջեւ, դադարեցւում էին, Քեմալը յետ էր ստանում ոչ միայն Կիլիկիան, այլ եւ խոշոր հողամասեր Սիրիայից եւ փոխարէնը տալիս էին ֆրանսիացիներին երկաթուղային կոնցեսիաներ: Յայտնագործուեց որ, բացի այդ բոլորից, ֆրանսական կառավարութիւնը, հակառակ իր իսկ պատերազմական մինիստրի ընդդիմութեան, լոկ Ֆրանքլէն Պույիոնի ստիպողական պահանջների վրայ, տուեց Մուսթաֆա Քեմալին 200 միլիոնի արժողութեամբ ռազմանիւթեր, դրանց թւում եւ 500 ձի ֆրանսական հեծելազօրքից, 8000 մաուզէր հրացան, գրաւման բանակի ամբողջ սանիտարական սարքուկարգը եւ 10,000 ձեռք զինուորական զգեստ: *Քեմալականութիւնը կենդանացաւ, ուժեղացաւ, ֆրանսիական իմպերիալիզմը մի անգամ էլ փրկեց խորտակուող Թիւրքիան, ուրքի կանգնեցրեց նրան եւ ուղարկեց յաղթելու յոյներին եւ այդ միջոցով ոչնչացնելու Սեւրի դաշնագիրը*» (Լէօ, *Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը. հատոր Բ*, տպ. Պահրի եղբարց, Փարիզ, 1935, էջ 231: Լէօն փաստական տուեալները բերելիս նշել է հետեւեալ հեղինակին՝ А. Сперанский, “Турецкий вопрос после мировой войны,” (Թուրքական հարցը համաշխարհային պատերազմից յետոյ), *Новый восток* (Նոր Արեւելք), 2:1922, Մոսկուա, էջ 137-43):

Ամենակարեւորը պետական անկախութեան պահպանումն է, որ ամենամեծ գրաւականն է ժողովրդի ապագայ զարգացման:
Մեր պետութեան գոյութիւնը, մեծ պետութիւնների տեսակէտից, այնչափ իմաստ եւ արժէք ունի, որչափ նա բաժանում է Թուրքիան Ռուսաստանից: Այն օրը, երբ Հայաստանը կորցրեց իր անկախութիւնը եւ դարձաւ փաստօրէն խաղալիք Ռուսաստանի ձեռքին, կը վերանայ այլեւ այն միակ ուժեղ հիմքը, որ ստիպել էր եւ ստիպում է եւրոպական մեծ պետութիւններին ընդունել Հայաստանի գոյութիւնը իբրեւ պետութիւն:
Եթէ Հայաստանը կամենում է ապրել իբրեւ պետութիւն, ամէն կերպ ***նա պիտի խուսափի լինել իր մեծ հիւսիսային հարեւանի՝ Ռուսաստանի խաղալիքը***:
Միւս կողմից, մեր դարաւոր թշնամին՝ Թուրքիան, կարող է իվերջոյ հաշտուել մեր պետական գոյութեան հետ միայն այն ժամանակ, երբ մենք մէկ անգամ ընդմիշտ կը հրաժարուենք ռուսական կողմնորոշումից:
Ճիշտ է, Մուստաֆա Քեմալի Թուրքիան, որ այսօր պատերազմում է մեզ հետ, հանդէս է գալիս իբրեւ բոլշեւիկեան Ռուսաստանի դաշնակիցը: Բայց քաղաքական մեծ իմաստութիւն պէտք չէ ըմբռնելու համար, որ թուրք-ռուսական բարեկամութիւնը մի ժամանակաւոր զինակցութիւն է օբեկտիւ, յարատեւ շահերով միանգամայն հակամարտ երկու ուժերի միջեւ:
Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ թուրքերի եւ ռուսների ներկայ բարեկամութիւնը մի արհեստական կապ է, որ կարող է կտրուել ամէն վայրկեան եւ անխուսափելիօրէն պիտի կտրուի, երբ մէկ կամ միւս կողմը հասած կը լինի իր գլխաւոր նպատակին:
Ռուսաստանը Թուրքիայի պատմական թշնամին է, եւ այս թշնամութիւնը չի բխել երբեք իշխողների սուբեկտիւ ցանկութիւններից, այլ եղել է երկու պետութիւնների եւ ժողովուրդների գոյութեան եւ զարգացման օբեկտիւ պայմանների անխուսափելի արդիւնք:
Ահա թէ ինչու ոչ բոլշեւիկները, ոչ էլ քեմալականները կարող են փոխել իրենց պետութիւնների քաղաքականութեան հիմնական ուղղութիւնը: Ճիշտ այնպէս, ինչպէս Անգլիան վերջին եւրոպական պատերազմի ժամանակ եղաւ Ռուսաստանի զինակիցը, որովհետեւ այդ էր պահանջում Անգլիայի ժամանակաւոր շահը, բայց այդ գիտակցութիւնը բնաւ չխանգարեց, որ Անգլիան մնար Ռուսաստանի ամենամեծ եւ ամենավտանգաւոր թշնամին:
Ռուսների հետ լինելով չէ, որ հայ ժողովուրդը կարող է ապահովել իր եւ իր պետութեան գոյութիւնը: Որովհետեւ ռուսների տիրապետութիւնը Անդրկովկասում, միջազգային ներկայ պայմաններում յարատեւ չի կարող լինել, եւ նա վաղ թէ ուշ պիտի վերանայ անխուսափելիօրէն, հենց որ լուծուի ռուսական խնդիրը:
Ռուսաստանը ինքն էլ իր բոլշեւիկ իշխանների բերանով բազմիցս յայտնել է, որ պատրաստ է յարգել, ճանաչել Անգլիայի շահերը Անդրկովկասում:
Հայ ժողովուրդը եւ Հայաստանը չեն կարող կապել իրենց բախտը մի պետութեան հետ, որը, իր իսկ խոստովանութեամբ, պիտի հեռանայ Անդրկովկասի սահմաններից, եթէ Անգլիան եւ եւրոպական միւս մեծ պետութիւնները կամենան հաշտուել նրա գոյութեան հետ:
Իր փրկութեան համար Հայաստանը ունի միայն մի ճանապարհ՝ գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարեւանի՝ թուրքի հետ:

Եթէ հայ ժողովուրդը կամենում է ապրել եւ ապահովել իր պետական եւ ֆիզիկական գոյութիւնը յարատեւօրէն, նա պէտք է ունենայ ոչ թէ ռուսական, այլ թուրքական կողմնորոշում:
Եւ եթէ հայ ժողովուրդը վերջին համաեւրոպական պատերազմի ժամանակ չունենար ռուսական կողմնորոշում, այլ լինէր թուրքերի հետ առանց վերապահութեան, ամենայն հաւանականութեամբ, նա խուսափած կը լինէր կոտորածներից եւ նրա վիճակը վրացիներից էլ լաւ կը լինէր:
Մէկ անգամ ընդմիշտ մենք պիտի ըմբռնենք, որ օտարի վրայ յենուելով չէ, որ մենք կարող ենք իրապէս խաղաղութիւն ձեռք բերել մեր ժողովրդի համար, ***այլ միմիայն մեր սեփական ուժերին ապաւինելով պիտի որոշենք մեր բախտը մեր ուժեղ հարեւանների՝ թուրքերի հետ:***
Ամէն մի օտար միջամտութիւն, մանաւանդ ռուսների միջամտութիւնը, կարող է միայն վնասակար լինել հայ եւ թուրք ժողովուրդների յարատեւ խաղաղեցման համար:
Որովհետեւ օտարը, նախ պիտի խտացնի այն փոխադարձ անվստահութեան մթնոլորտը, որ գոյութիւն ունի երկու դարաւոր հարեւանների միջեւ եւ անկարելի դարձնի մի հաստատուն համաձայնութիւն, եւ, երկրորդ, օտարը պիտի աշխատի մեզ գործիք դարձնել իր սեփական շահերի եւ նպատակների համար, որոնց տեսակէտով հայ-թուրքական յարատեւ ու անկեղծ հաշտութիւնը իրապէս ցանկալի չէ:
Մինչդեռ հայ ժողովուրդը, ինչպէս եւ թուրք ժողովուրդը, կարօտ է յարատեւ հաշտութեան:
Բաւական է, ինչքան խաբուեցինք օտարներից:
Դնենք մեր յոյսը միայն մեր ուժի վրայ եւ խօսենք մեր թշնամու հետ երես առ երես, առանց "բարերար" միջնորդների: Եւ այն, ինչ որ ձեռք կը բերենք այդ ճանապարհով, յամենայն դէպս, կը լինի աւելի վստահելի, աւելի հաստատուն եւ աւելի յուսատու մի բան, քան այն, ինչ որ մենք կարող ենք ստանալ միջնորդների ջանքերով[40]:

Բնականաբար, ոչ-պատահաբար, այս ամէնին նպաստեց նաեւ չափազանց ուշացած՝ վերջին պահին բրիտանական զէնքի - կիսատ-պռատ, շատ յաճախ անորակ, առանց պահեստամասերի - առաքումը Հայաստան, այն էլ պատերազմի դժուար օրերին, երբ վերակազմակերպուելու ոչ մի հնարաւորութիւն չէր մնացել: Այդ զէնքի մէկ երրորդը միայն ուշացումով հասաւ հայերին, մէկ երրորդը՝ վրացիներին եւ նոյնքան՝ քեմալականներին: Խոչընդոտներ յարուցուեցին հայկական բանակի ռազմական խորհրդատուութեան եւ հրահանգիչների, ինքնաթիռների առաքման եւ այլ բազմաթիւ հարցերում: Իվերջոյ անգլիացիների պլանները՝ Անդրկովկասում իրենց քաղաքական արբանեակների հետ, ոչ-լիարժէք իրագործուեցին, իսկ եթէ իրագործուեցին՝ ապա անդրկովկասեան ժողովուրդների զոհաբերման գնով: Բայց բրիտանական ձեռքն այդպէս էլ չհասաւ Բաքուի

[40] Խմբագրական, *Յառաջ*, ՀՅԴ Բիւրոյի պաշտօնաթերթ, Երեւան, Շաբաթ, 20 Նոյեմբեր 1920:

սեւ ոսկուն՝ նաւթին: Դրան իհարկէ նպաստեց Լենինի հակագաղութային յեղափոխութեան կոչը մուսուլմանական աշխարհին՝ որը արդիւնաւէտ ճնշման ձեւ եղաւ Բրիտանիայի վրայ: Վերջինս արագ հասկացաւ եւ անցաւ պաշտպանողական դիրքերի, փոխելով իր քաղաքական ընթացքը: Միջազգային այդ խաղի արդիւնքում ամէն մէկը ստացաւ իր բաժինը: Ռուսաստանը վերադարձրեց իր կայսերական հսկողութիւնը Անդրկովկասում եւ առեւտրական պայմանագիր ստորագրեց Բրիտանիայի հետ, Քեմալն էլ Լոզանի միջոցով իր թուրքական հանրապետութիւնը եւ դարձաւ «քաղաքակրթութեան հայրը»:

Դուրս եկաւ, որ թէ՛ Քեմալը, թէ՛ Լենինը բաւականաչափ խելամիտ գտնուեցին, որ չանցնեն իրենց հակառակորդ Բրիտանիայի կողմից գծուած սահմանագիծը, այսինքն՝ պայքարի մէջ մտնել սահմանային տարածքների համար:

ՍԹՈՔՍԸ ԵՒ ԼԸԳՐԱՆԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բրիտանական աշխարհաքաղաքականութեան նոր փոխակերպումների պայմաններում, բազմիմաց եւ ճարպիկ Սթոքսը շարունակեց իր մեքենայութիւնները՝ ձգտելով ապակողմնորոշել ՀՀ կառավարութեանը, վերջինիս հակախորհրդային տրամադրուածութեան դրդելով կեղծ, օդում կախուած անիրական խոստումներ տալով: Այս մասին տեղեկանում ենք Աբրահամ Գիւլխանդանեանին ուղղած ֆինանսների նախարարութեան առեւտրական բաժնի աշխատակից Մարտին Շաթիրեանի մի շատ հետաքրքիր նամակից.

> Սթոքսը մեզ հանգստացնում էր նրանով, որ սովետը զօրք շատ քիչ ունի, որ նրանք ամենաթոյլ եւ վատ զօրքերն են, որ 20000 մուսաւաթիսթներ պատրաստ են ապստամբելու, միայն վախենում են մեզանից, որ մենք կ'օգտուենք հանգամանքից եւ կը յարձակուենք նրանց վրայ, որ այդ պատճառով սովետական զօրքերը մեզ համար վտանգաւոր չեն կարող լինել, իսկ մենք մեր ուժերով, որքան հասկացել է Սթոքսը, կարճ ժամանակամիջոցում կը յաղթենք Քեմալին: Նա աւելացրեց, որ Անգլիան խոստացել է մէկ միլիոն փութ նաւթ տալ մեզ երկար ժամանակի վարկով, կը տայ եւ զինամթերք եւ այլն, որ Տրապիզոնի բլոկադան արդէն յայտարարուած է, որ յոյների յաջողութիւնները մեզ մեծապէս օգնում են եւ վերջապէս ստիպուած պէտք է զինակցի մեզ[41]:

Սակայն ի զարմանս ամէնքի, Սթոքսի կանխագուշակութիւնը չի իրականանում: Ստանալով հայոց կառավարութեան պայմանները, Լեգրանը չի ընդհատում բանակցութիւնները եւ, թէեւ, ոչ բոլոր պահանջներն է ընդունում, բայց խիստ բարեացակամ է վերաբերում: Այդ մասին է խօսում հաւանաբար այդ դէպքերի ականատես եւ մասնակից Շաթիրեանը.

> Նրա վերաբերմունքը մեզ համար անսպասելի բարեացակամ եղաւ:
> 1. Ընդունեց (խօսքը ՀՀ անկախութեան ճանաչելու մասին է - Վ.Վ.).

[41] Զոհրաբեան, էջ 228:

2. Երկար վիճելուց յետոյ հարցրեց. «եթէ այս րոպէիս մենք տանք ձեզ Նախիջեւանն ու Զանգեզուրը, կը հրաժարուէ՞ք Ղարաբաղից յօգուտ Ադրբեջանի».

3. Դա անհնար է, բայց մինչեւ Քեմալի հետ համաձայնութեան գալը կարելի է մի չէզոք գօտի ստեղծել 14 թ.-ի սահմանից որոշ հեռաւորութեան վրայ, որը կը պահպանուի սովետական զօրքերով, որպէսզի Քեմալի կողմից ոչ մի վտանգ Հայաստանի չսպառնայ.

4. Տրանզիտը.

ա/ այդ անհնար է, սովետը այնքան զինամթերք չունի, որ ձեզ էլ տայ, Քեմալին էլ, եւ ի՞նչ հարկաւոր է ձեզ այդքան զէնք, չէ՞ որ ձեր զօրքերի թիւը այնքան էլ մեծ չէ: Մենք պատասխանեցինք, որ այժմ կռուելու է ոչ թէ միայն զօրքը, այլեւ ամբողջ հայ ժողովուրդը, եւ մենք կարող ենք կռուի դաշտ դուրս բերել ոչ պակաս, քան հինգ հարիւր հազար մարդ: Նա, իհարկէ, ապշած մնաց եւ այդ յայտարարութիւնը նրան լրջացրեց, եւ նա աւելացրեց. «Կէսի մասին ես չեմ կարող պատասխանել վերջնականապէս, իսկ կարող եմ համաձայնուել, որ մի որոշ տոկոս անցկացրած զէնք ձեզ թողնուի»:

Իսկական տպաւորութիւնն այնպէս էր, որ Լեգրանը կարող է եւ բոլոր պայմաններն ընդունել, գուցէ, բացի Քեմալի զօրքերը մինչեւ Տրապիզոն, Երզնկա ետ քաշելը[42]:

Միաժամանակ Շաթիրեանը, որն ըստ երեւոյթին քաջատեղեակ էր Սթոքսի հետ վարչապետ Օհանջանեանի եւ Տէր Մինասեանի բանակցութիւններին, արդէն տեղեկացնում է հայերին Խորհրդային Ռուսաստանից շեղելու եւ ապակողմնորոշելու ուղղութեամբ հերթական ձեռնարկմանը, թէ հնարաւոր է Վրաստանի հետ միասին դուրս գալ ընդդէմ խորհրդային վտանգի՝ կնքելով ռազմաքաղաքական դաշինք, ինչն անիրականի ոլորտից է, եւ Վրաստանը երբեք չէր համարձակուի եւ անխոհեմ կը լինի մէկ հիւսիսում ունենալ թշնամի՝ ի դէմս Խորհրդային Ռուսաստանի, միւս կողմից՝ հարաւից ընդդէմ քեմալական Թուրքիայի:

Հենց դաշնակիցների նկատմամբ սնահաւատ նուիրուածութիւնը դրսեւորուեց Կարսի անկման օրերին, երբ ՀՀ կառավարութիւնը խուճապային քայլեր արեց՝ համոզելու դաշնակիցներին՝ օգնութեան հասնելու կործանուող Հայաստանին: Այդ օղակում իր դերակատարումն ունեցաւ նաեւ Սթոքսը, որը բազմիցս մոլորեցրեց հայկական կողմին, իսկ ՀՀ կառավարութիւնն էլ անհեռատեսօրէն բազմիցս ընկաւ նրա սարքած թակարդը: Կարսի աղէտն էլ կարծես չսթափեցրեց ՀՀ ղեկավարութեան: Այդ մասին է փաստում վարչապետ Օհանջանեանի 1920 Հոկտեմբերի 31ի հեռագիրը Սթոքսին, միամտօրէն կարծելով, թէ Կարսի անկման լուրը վերջապէս կը սթափեցնի Դաշնակիցներին եւ նրանք կտրուկ քայլեր կը ձեռնարկեն զսպելու թուրքերին.

Հասել է այն րոպէն, երբ դաշնակիցները դրականապէս եւ առանց յետաձգելու պէտք է օգնութեան գան Հայաստանին: Երկիրը պատրաստ է զոհելու եւ անելու զոհողութիւններ, միայն թէ մէնակ չմնայ: Հակառակ մեր բոլոր ջանքերին,

[42] Նոյն, էջ 229:

վրացիք մերժեցին մեզ հետ զինակից լինել: Իմ կառավարութեան անունից խնդրում եմ ձեզ՝ բարի լինել հաղորդակցութեան մէջ մտնելու ձեր կառավարութեան հետ, որպէսզի անմիջապէս օգնութիւն տրուի Հայաստանին եւ շեշտուի դաշնակիցների կողմից Տրապիզոնում անմիջական դեսանտի անհրաժեշտութիւնը, որպէսզի յունական ֆրոնտում թուրքերի վրայ ճնշում գործադրուի, որ զէնք, ռազմամթերք, թնդանօթ, մազութ եւ փոխադրութեան միջոցներ շտապ ուղարկուեն Հայաստանի համար: Իմ կառավարութիւնը սպասում է Ձեր կառավարութեան կողմից Հայաստանին տրուելիք օգնութեան չափին եւ ժամանակին: Որպէսզի դրութիւնը փրկուի, անհրաժեշտ է, որ այդ օգնութիւնը լինի անմիջական, այլապէս դաշնակիցների ֆրոնտի այն մասը, որ Հայաստանի կողմից պաշտպանւում է, անխուսափելիօրէն կը ճեղքուի: Իմ կառավարութիւնը, ինչպէս Ձեզ յայտնի է, յետաձգել է Ռուսաստանի հետ բանակցութիւնները, սպասելով անմիջական օգնութեան[43]:

Ակնյայտ էր, որ Դաշնակիցները պատրաստ չէին հայկական պետութեան գոյութիւնը պահպանել իրենց օժանդակութեամբ: Իսկ հայերի խնդրին քաջածանօթ Քըրզընը, Հոկտեմբերի 25ին Լոնդոնում ՀՀ ոչ-պաշտօնական ներկայացուցիչ Յովհաննէս Բագրատունու հետ Օզպորնի եւ Թիլլիի հետ զրոյցից յետոյ գտաւ, որ խօսակցական լեզուով ասած հայերը «փտած ապրանք են»: Դրան յաջորդեց Բրիտանիայի ԱԳՆի հեռագիրը Հոկտեմբերի 29ին՝ Սթոքսին, որ Տրապիզոնում ռազմական տեղաշարժ չի լինի[44], ինչի մասին բազմիցս խնդրում էր հայկական կողմը: Կարծես՝ ակնյայտ էր, որ Բրիտանիան պատրաստ էր ցանկացած պահի լքել ՀՀն ի շահ իր հնարաւոր կորուստների նուազեցման՝ թուրքերի հետ համաձայնութեան գնով եւ վերադառնալով Թուրքիան Ռուսաստանի դէմ իբրեւ արգելափակիչ պատուար օգտագործելու իր աւանդական ռազմավարութեանը: Ինչպէս պարզւում է Բրիտանիայի ԱԳՆի եւ պատերազմական նախարարութեանը Հոկտեմբերի 26ի գրագրութիւնից, հենց Սթոքսը իրենց խորհուրդ էր տալիս զէնք ու ապրանք ուղարկել Հայաստան ու Վրաստան, գնահատելով Հայաստանի վրայ խորհրդաթուրքական միացեալ յարձակման հնարաւորութիւնները[45]: Այսինքն, ակնյայտ է, որ Հայաստանը ստեղծուած ծանրագոյն իրավիճակում ակնկալիքների եւ բրիտանական աջակցութեան առումով շարունակում էր մնալ գրեթէ զրոյական կէտի վրայ: Բրիտանացիները փոփուխութեան էին ենթարկել իրենց անդրկովկասեան ռազմավարութիւնը՝ հայկական կառավարութեանը խորհուրդ տալով լեզու գտնել թուրքերի հետ, սակայն ամէնեւին էլ հաշուարկներ չկապել բոլշեւիկների հետ եւ նրանց անվերապահօրէն մերժել: Նման ռազմավարութեան իրականացումը ի դէմս Սթոքսի դրուեց բրիտանական ռազմաքա-

---

[43] Մ. Արզումանեան, *Արհաւիրքից վերածնունդ*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1973, էջ 337-38:

[44] Յովհաննիսեան, *Հայաստանի, հտր. IV*, էջ 248:

[45] Նոյն, էջ 248-9:

ղաքական առաքելութեան վրայ: Իսկ վերջինս այն լաւագոյն յաջողութեամբ իրագործեց:

Սթոքսի կողմից որդեգրուած բրիտանական այս երկդիմութիւնը տրամաբանական պերճախօս արտոցոլում է գտել ամերիկեան բարձրաստիճան զինուորական, փոխծովակալ, թուրքամոլ Մարկ Լեմպըրթ Պրիսթոլի 1919 Ապրիլի 8ի խօսքերում: Նա դէմ էր ԱՄՆի կողմից հոգատարութիւն ստանձնելուն: Մասնաւորապէս Հայաստանի պարագայում, բրիտանական կամ անգլօսաքսոնական քաղաքականութեան բնութագրական կարելի է համարել՝ «*համարեա ամայի մի տարածքի, զուրկ բնական պաշարներից եւ գործնականում առանց երկաթուղային հաղորդակցութեան կամ որեւէ նաւահանգստի*»: Պրիսթոլը մտովի պատկերացնելով, թէ ինչ կը պատահի Օսմանեան կայսրութեան հնարաւոր մասնատման դէպքում, Բաթումի, Թիֆլիս եւ Բաքու Յունիսին կատարած շրջագայութիւնից յետոյ գրում է.

> Փաստ է, որ Կովկասի այդ, այսպէս կոչուած հանրապետութիւնները (Ադրբեջանը, Վրաստանը եւ Հայաստանը) կատարեալ խեղկատակութիւն են: Կառավարութեան անդամները ոչ թէ ժողովրդին են ներկայացնում, այլ գաղտնի ընկերութիւնների դրածոներն են, որոնք տարիներ շարունակ վարժեցուել են խարդաւանքների եւ խաբէութիւնների: Շատ քիչ բացառութիւններով դրանք վստահելի չեն եւ ընդհանուր առմամբ, չարաշահում են իրենց պաշտօնները: Կովկասում տիրող այս դրութիւնը ակնառու օրինակն է այն բանի, թէ ինչ կը պատահի Թուրքիայի մնացած մասի հետ, եթէ այն կոտորակուի մանր պետութիւնների[46]:

Արդարեւ, Պրիսթոլի համար ելակէտ էր, որ «*թուրքն ունի բնաւորութեան որոշակի առանձնայատկութիւններ, որոնք այնքան բարձր են միւս ժողովուրդների յատկութիւններից, որ մնում է միայն համակրել թուրքին, չնայած երբեք չի կարելի մոռանալ նրա բնաւորութեան վատ գծերը, որոնք դրսեւորւում են հպատակ ազգութիւնների դէմ կատարած արարքներում*»[47]:

Այդուհանդերձ, ինչպէս իրաւացիօրէն եզրայանգում է պատմաբան Զոհրաբեանը, չնայած Օհանջանեանի՝ Լեգրանի հետ բանակցաընթացքի իրողութիւնների կեղծմանը եւ խոստմանը՝ մնալ հակաբոլշեւիկեան ճամբարում, այդ ամէնը անտեղի էր եւ բոլորովին էլ չազդեց դաշնակիցների՝ յօգուտ Հայաստանի ձեռնարկուելիք յետագայ քայլերի վրայ[48]: Այդպիսի մօտեցմանը նպաստեց նաեւ, որ Սթոքսը ապակողմնորոշելով ՀՀ կառավարութեանը իր ակնկալիքներում, անտեսելով իրողութիւնները, առանց բաւարար հիմքերի ոգեւորում էր ՀՀ կառավարութեանը դիմադրել թուր-

---

[46] Յովհաննիսեան, *Հայաստանի, հտր. I*, էջ 361:

[47] Նոյն, էջ 356-7:

[48] Զորհրաբեան, էջ 279:

քերին, ասելով, թէ հայկական բանակը կարող է կասեցնել թուրքական յարձակողականը:

Հոկտեմբերի 31ին ՀՀ կառավարութիւնը հեռագրել էր նաեւ Թիֆլիսում ՀՀ դիւանագիտական ներկայացուցչին, խնդրելով շտապ կրկին տեսակցել Սթոքսի հետ՝ օգնութեան ակնկալիքով: Նոյեմբերի 2ին կայանում է տեսակցութիւնը Սթոքսի հետ: Բեկզադեանը յայտնում է Կարսի անկման լուրը, դժգոհելով դաշնակիցների անտարբերութիւնից: Սակայն Սթոքսը սառնասրտօրէն պատասխանում է, որ ինքը հեռագրել է իր կառավարութեանը, բայց դեռ ոչ մի պատասխան չի ստացել, որ «*ըստ երեւոյթին Անտանտը կամ չի կարող, կամ էլ չի ցանկանում օգնել*»: Սթոքսը միաժամանակ խորհուրդ է տալիս «*համաձայնութեան գալ թշնամիների հետ*», աւելացնելով, որ չնայած շատ է ափսոսում, «*բայց դա միակ ելքն է: Հետեւութիւնները ինքներդ արէք*»[49]:

Անդրկովկասում Սթոքսը հայերի համար լաւագոյն ելքը համարում էր թուրքերի հետ հաշտութեան կնքումը եւ ետ կանգնելը, աւելի ճիշտ՝ հրաժարուելը Միացեալ Հայաստանի ստեղծման սեփական ծրագրերից, այլ ոչ թէ գնալ ինքնուրոյնութեան կորստին եւ յարիլ բոլշեւիկներին կամ նրանց իշխանութեան տակ անցնել: Այդպէս, Սթոքսը Հայաստանի համար ուղեգծում էր ճանապարհ դէպի Ալեքսանդրապոլ[50]: Սթոքսը կարծում էր, որ թուրքական ներխուժումը Հայաստան արմատականօրէն փոխել է ողջ քաղաքական դրութիւնը տարածաշրջանում: Սթոքսի համար էական դարձաւ տարածաշրջանային տարակարծութիւնների վրայ խաղարկումը: Նա ամէն կերպ աշխատում էր Հայաստանին շեղել բոլշեւիկներից, որի համար ջանքեր չէր խնայում: Այդ նպատակով էլ 1920 Նոյեմբերի 3ին տեսակցում է Օհանջանեանի հետ Երեւանում.

> Սոյն ամսի 3ին Թիֆլիսից Երեւան ժամանեց Անդրկովկասում Բրիտանիայի գերագոյն կոմիսար գնդ. Սթոքսը, որը փոխարինում է կոմանդոր Լիվկին: Գնդապետը երկար զրոյց ունեցաւ պ. Վարչապետի հետ: Առաջին հերթին նա հետաքրքրուեց Կարսի դէպքերով...Սթոքսը կասկած յայտնեց այն մասին, թէ հայերը իսկապէս եւ անկեղծօրէն որոշել են կռուել քեմալականների դէմ: Նա ասաց, որ Անգլիան ներկայումս ի վիճակի չէ իրական օգնութիւն ցոյց տալու Հայաստանին: Ռմբակոծել, կամ թէ գրաւել Տրապիզոնը միտք չունի, քանի որ Անգլիան չի կարողանայ մեծ ուժեր ափ հանել՝ երկրում խորանալու համար, իսկ միայն քաղաքի եւ նաւահանգստի գրաւումը Հայաստանին մեծ օգնութիւն չի բերի[51]:

Այն՝ որ իրավիճակը Հայաստանի համար դարձել էր ծայրայեղօրէն լարուած, միանգամայն ակնյայտ երեւում է Վրաստանում ՀՀ դիւանագիտական ներկայացուցչի կողմից ՀՀ ԱԳ նախարարին ուղղած 1920 Նոյեմ-

---

[49] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 72:

[50] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 10-13:

[51] Զոհրաբեան, էջ 280. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 8, ց. 8, գ. 617, թ. 129:

բերի 3ի հեռագրից, որում յայտնում էր Կարսի անկման եւ Սթոքսի հետ տեսակցութեան մասին, որից տեղեկացել էր, որ Դաշնակիցների երկրները չեն կարող օգնութեան հասնել Հայաստանին, ասելով, որ Հայաստանը իրաւունք ունի համաձայնութեան գնալ հակառակորդների հետ եւ անհրաժեշտ հետեւութիւններ անել[52]:

Սթոքսը իհարկէ խտացնում էր գոյները, եւ իրաւացի է այս տեսանկիւնից, եզրայանգելով, թէ Տրապիզոնի գրաւումով կամ ռազմական գործողութեամբ Բրիտանիան կը նպաստի Հայաստանին, այլ բան է, որ դա նրա պլանների մէջ պարզապէս չկար, առաւել եւ վերջինիս կառավարութիւնը վարում էր թրքամէտ քաղաքականութիւն: Հենց այս պատճառով Բեկզադեանի ջանքերը՝ Թիֆլիսում համոզելու դաշնակից համարուող երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչութիւնների ղեկավարներին ձեռք մեկնելու աղէտի մէջ յայտնուած իրենց կրտսեր դաշնակցին, արդիւնք չունեցան: Օգնութեան խնդրանքին՝ Սթոքսի նման է արձագանգում Ֆրանսայի ներկայացուցիչ Տը Քորպէյը, իսկ ամերիկեան հիւպատոս Մոզըրը բացէիբաց Նոյեմբերի 6ին յայտարարում է, որ «*ԱՄՆը չի մասնակցել Սեւրի պայմանագրին եւ թէեւ ԱՄՆի կառավարութիւնը ճանաչել է Հայաստանի Հանրապետութիւնը եւ նրան ցոյց է տուել աջակցութիւն, ինչ-որ հնարաւոր է գտել, բայց երբեք իր վրայ պարտաւորութիւն չի վերցրել հայ ժողովրդին պաշտպանելու կամ ռազմական աջակցութիւն ցոյց տալու իմաստով: Դրա համար էլ նա չի կարող ներկայ ճգնաժամում իր վրայ պատասխանատուութիւն վերցնել*»[53]:

Այդ ամէնը աւարտւում է նրանով, որ ինչպէս արձանագրւում է Թիֆլիսում Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչի 1920 Նոյեմբերի 7ի եւ 12ի պաշտօնական հաղորդագրութիւններում, ելնելով Հայաստանի համար ստեղծուած ծայրայեղօրէն ծանր վիճակից, եւ մասնաւորապէս թիկունքում՝ Կարսի մարզի Աղբաբայի շրջանում մահմեդական բնակչութեան խռովութեան փաստերից[54], զինուորական հրամանատարութիւնը գնաց Նոյեմբերի 8ին թուրքերի կողմից ներկայացուած վերջնագրի ընդունմանը[55]: Բեկզադեանի ջանքերը գործնականում ակնկալուող արդիւնքները չունեցան:

Եւ այսպէս, կորցնելով Դաշնակիցների եւ առհասարակ եւրոպական տէրութիւններից օգնութիւն ստանալու բոլոր յոյսերը, ՀՀ կառավարութիւնը Նոյեմբերի 3ին որոշում է զինադադար խնդրել թուրքերից, ինչն աւարտւում է անվերապահ անձնատուութեամբ: Այն, որ ՀՀ գործերը վատ

---

[52] *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920*, էջ 327:

[53] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 514. Թ. 17:

[54] Ինչը սկզբնական շրջանում հարկադրել էր Ալեքսանդրապոլի մատոյցներում գտնուող հայկական զօրքի մի մասը տեղափոխել Կարսի մարզ՝ մահմեդական խռովութիւնը ճնշելու համար:

[55] *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920*, էջ 333, 338:

էին, այդ մասին Նոյեմբերի 6ին Երեւանում բրիտանական ներկայացուցիչ Քորթը հեռագրում է Թիֆլիսում գտնուող Սթոքսին, ընդգծելով ՀՀ վատթարացող ռազմական դրութեան մասին[56]: Իսկ այդ նոյն ժամանակ Սթոքսը ձեռքերը ծալած չի նստում եւ Նոյեմբերի 6ին հեռագրում է Լոնտոն իր կառավարութեանը, որ քեմալական զօրքերի ներխուժումը խախտել է հաւասարակշռութիւնը, եւ որ այժմ թուրքերը ձգտում են վերահսկողութեան տակ առնել Ադրբեջանը, այն ժամանակ, երբ բոլշեւիկներն էլ ձգտում էին ամէն գնով այն պահել, թում էր, թէ տարակարծութիւնները երկու մերժուած իշխանութիւնների միջեւ անխուսափելի են եւ այն հնարաւոր չի լինի յաղթահարել:

Սակայն կար մի խնդիր, որ Բրիտանիան երկուսի նկատմամբ էլ, իբր թէ թշնամաբար էր տրամադրուած (ինչը ակնյայտօրէն իրողութիւններից դուրս էր - Վ.Վ.), սակայն չէր ցանկանում դրանցից եւ ոչ մէկի հետ կռուել[57], եւ բոլշեւիկները դա ապացուցել էին ջախջախելով Դենիկինի, Վրանգէլի, Կոլչակի եւ միւս Սպիտակ բանակները, իսկ թուրքերը Կալիֆոլիի գործողութիւնում ջարդել էին բրիտանացիներին, այնուհետեւ մեծ յաջողութեամբ՝ յոյներին եւ հայերին, որը նաեւ Դաշնակիցների, եւ գլխաւորապէս Բրիտանիայի թողտուութեան արդիւնք էր: Սթոքսը կարծում էր, որ բրիտանական քաղաքականութիւնը Անդրկովկասում ըստ այդմ պէտք է փոփոխութեան ենթարկուի եւ յարմարեցուի նոր իրավիճակին. «*Եկել է պահը ապահովել մեզ դրանցից մէկի հետ բարեկամութեամբ ընդդէմ միւսի: Թուրքիայի հետ մեր բարեկամութիւնը մեզ վրայ կը նսրի Թուրքիայում յունական առաջխաղացման աջակցութիւնից հրաժարումով: Այն կը փանի ողջ իսլամի աշխարհի անցմանը մեր կողմը, իսկ Արեւելեան կայսրութեան շարունակութեան համար էական է, որպէսզի Իսլամը լինի մեր կողմում*»[58]: Ըստ այդմ, Սթոքսը բրիտանական դահլիճին առաջարկում էր իր ծառայութիւնները թիֆլիսեան գործակալների միջոցով Քեմալի հետ կապ հաստատելու համար: Եւ դրանից ելնելով, նա Կոստանդնուպոլսում գտնուող բրիտանական գխաւոր սպայակոյտին խորհուրդ տուեց կասեցնել ՀՀի համար նախատեսուող զէնք-զինամթերքի նաւերի վրայ բեռնման նախապատրաստութիւնները, քանի որ արդէն հայերը գնացել են թուրքերի հետ հաշտութեան շուրջ պայմանաւորուածութեան, առաջարկելով այդ զէնք-ռազմամթերքը յանձնել Վրաստանին, որը նրա կարծիքով, լիակատար տրամադրուած է մինչեւ վերջ կռուել ինչպէս բոլշեւիկների, այնպէս էլ թուրքերի դէմ: Հենց դրանից ելնելով, Բրիտանիայի պատերազմական նախարարութիւնը արագ որոշում կայացրեց խոչընդոտելու լրացուցիչ զէնքի առաքումը Հայաստանին, իսկ Նոյեմբերի 13ին ծովակալութեան

---

[56] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 514. թ. 105, 206:

[57] Ованнисян, էջ 787:

[58] Նոյն:

ծառայութիւնը հրաման արձակեց այլեւս վառելիք չմատակարարել Հայաստանին[59]:

Դաշնակիցների վերաբերմունքի փոփոխութիւններն ակնյայտ էին եւ ոչ-հայամէտ ու՝ դաժան: 1920 Նոյեմբերի 12ին Բեկզադեանը դիմելով կառավարութեանը, յայտնում էր, որ օր առաջ տեսել է Սթոքսին, որը վերջապէս «*պատռեց իր վրայից դիմակը եւ յայտարարեց, որ եթէ ինքը լինէր Անգլիայի ղեկավարը, ինքը կը համագործակցէր քեմալականների հետ, քանի որ նրանք հակաբոլշեւիկեան շարժում են, եւ աջակցելով Քեմալին, Անգլիան կը բարձրացնի իր ընկած վարկը մահմեդական աշխարհում ...Ակնյայտ է, որ բրիտանացիներից մեզ ոչինչ սպասել պէտք չի*»[60]: Նոյեմբերի 14ին Օհանջանեանը հրահանգում է Բեկզադեանին պարզել, թէ քանի որ Սթոքսը արտայայտում է Բրիտանիայի ընթացիկ քաղաքականութիւնը եւ կապուած է Քեմալի գործակալների հետ, ուստի նրան պէտք է խնդրել, որ Բրիտանիայի նոր առաջարկի հիման վրայ համաձայնութեան հիմքեր գտնի հայերի եւ թուրքերի միջեւ: Սթոքսին պէտք է հասկացնել, որ «*Հայաստանը կարող է պատրաստ լինել ընթացք տալու նրա յանձնարարած գործողութիւններին եւ որ ցանկալի կը լինի մի հանդիպում ունենալ քեմալական ներկայացուցչի հետ*»[61]: Սթոքսը գիտէր 1920ին Թիֆլիսում Անկարայի կառավարութեան ռազմական ներկայացուցչութեան ղեկավար, գնդապետ Քեազիմ բէյ Դիրիկի գտնուելու վայրը: Վերջինս Նոյեմբերի կէսերին, մեծ ռազմական առաքելութեամբ[62] Թիֆլիս էր եկել Վրաստանի կառավարութեանը հաւաստիացնելու, որ թուրքերը իրենց դէմ յարձակողական ծրագրեր չունեն եւ միջնորդատրուած ձեւով օգնում էր Նոյեմբերի 15ին Բեկզադեանի հանդիպմանը վերջինիս հետ՝ պարզելու, կարելի՞ է արդեօք առանց Խորհրդային Ռուսաստանի միջնորդութեան խաղաղ պայմանագրի գալ[63]: Բեկզարեանը արդէն համոզուած էր,

---

[59] Նոյն:

[60] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 255, ֆ. 200, ց. 2, գ. 101, թ. 1-2. նաեւ՝ С. В. Хармандарян, "К вопросу об установлении Советской власти в Армении" (Հայաստանում Խորհրդային իշխանութեան հաստատման հարցի շուրջ), *Исторический архив* (Պատմական արխիւ), 6:1958, էջ 96-97. նաեւ՝ Е. К. Саркисян, Х. Абегян, А. Саркисян, "Миссия Леграна. Дипломатичееская миссия РСФСР в Армении" (Լեգրանի առաքելութիւնը. ՌԽՖՍՀ Դիւանագիտական առաքելութիւնը Հայաստանում), *Բանբեր Հայաստանի արխիւների*, 3:1967, էջ 77:

[61] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 625, թ. 61: Զոհրաբեան, էջ 78: А. М. Элчибекян, *Великая Октаябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении* (Հոկտեմբերեան սոցիալիստական Մեծ յեղափոխութիւնը եւ Խորհրդային իշխանութեան յաղթանակը Հայաստանում), Երեւան, 1963, էջ 179:

[62] Туманян, էջ 372, 418:

[63] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 101, թ. 1: ֆ. 200, ց. 1, գ. 625, թ. 16. նաեւ՝ Զոհրաբեան, էջ 80. նաեւ՝ Саркисян-Абегян-Саркисян, էջ 81-82: Պայմանագիրը ձախողուեց ռազմական գործողութիւնների վերսկսմամբ, որի մասին Բեկզադեանը Նոյեմբե-

որ Արեւմուտքը օգնութեան չի գալու, եւ Հայաստանին մնում է բանակցել կա՛մ թուրքերի կա՛մ ռուսների հետ. այդ մասին նա հաղորդում է կառավարութեանը[64]:

1920 Նոյեմբերի 19ին ծածուկ ժամանելով Թիֆլիս, Խատիսեանը հանդիպում է դաշնակիցների յանձնակատարների եւ Քեազիմ բէյի հետ: Վերջինս յայտնում է թուրքերի յարձակողականի յաջողութեան մասին՝ Սեւրից Հայաստանի հրաժարականի պարտադրման պահանջով, եւ Հայաստանում մահմեդականների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ապահովմամբ, որով եւս մի անգամ ակնյայտ է դառնում թուրքերի հետ առանձին բանակցելու փակուղային վիճակի մասին[65]: Յետոյ Խատիսեանը տեսակցում է Սթոքսի հետ եւ նրան տեղեկացնում, որ կառավարութիւնը այլընտրանք չունի եւ պէտք է կա՛մ թուրքերի կա՛մ բոլշեւիկների հետ հաշտութիւն կնքի: Խատիսեանը յայտնում է, որ Հայաստանը պատրաստ է ընդունել կամ ունենալ անհամեմատ աւելի փոքր տարածք, քան նրան ցանկանում են տալ Սեւրով, որով ցանկանում էր Սթոքսից իմանալ, որ եթէ այդ տարբերակին համամիտ է՝ հաւանութիւն կը տա՞յ նման հաշտութեանը Բրիտանիայի կառավարութիւնը, եւ կը դառնա՞յ արդեօք բանակցային կողմ: Խատիսեանը կարծում էր, որ հայ ժողովուրդը մշուշի մէջ է, որ մի կողմից - ըստ տեղեկութիւնների - դաշնակիցները եւ յատկապէս բրիտանացիները աջակցում են քեմալականներին, որպէսզի թուրքերին ուղղեն ընդդէմ բոլշեւիկների, միւս կողմից՝ բոլշեւիկները տուել են հաւաստիացումներ, որ իրենք կարող են հասնել Թուրքիայի հետ հարցերի բարենպաստ կարգաւորմանը, եթէ միայն Հայաստանը հրաժարուի Սեւրի պայմանագրից եւ Արեւելեան քաղաքականութիւնում գործակցի բոլշեւիկների հետ, չհամաձայնուելով Հայաստանին խորհրդային կարգերի պարտադրմանը, կարծելով, որ դա ժամանակի ընթացքում տեղի կ'ունենայ: Խատիսեանը եզրակացութեան է գալիս, որ կառավարութիւնը ձգտում է խաղաղութեան, սակայն Հայաստանի համար առաւելագոյն նպաստաւոր պայմաններով[66]: Սթոքսը որպէս պատասխան բերում է Արեւելքի գծով Բրիտանիայի ԱԳՆի մասնագէտ Օզպորնի տեսակէտը, թէ՝ Թուրքիայի հետ հաշտութիւնը աւելի նախընտրելի էր դիտւում եւ հիմնաւոր, սակայն իրենք չեն կարող բանակցային կողմ լինել: Ըստ Օզպորնի, եթէ ենթադրուող պայմանագիրը Հայաստանին տայ բաւականաչափ հողեր, ապա իրենք յետագայում կ'աջակցեն դրան, որով կ'անտեսեն Ուիլսընի վերջնական որոշումը: Ըստ

որի 16ին կրկին տեղեկացնում է, ասելով, որ Քեազիմ բէյը նորից յետաձգել է իրենց հանդիպումը, իսկ Սթոքսը եւ դաշնակիցների այլ ներկայացուցիչները այդ դժուար պահին պարզապէս փորձում էին խուսափել Բեկզադեանի հետ հանդիպումից:

[64] Զոհրաբեան, էջ 82:

[65] Խատիսեան, էջ 252-4:

[66] Ովաննիսյան, էջ 789-90:

Սթոքսի բերանացի տեղեկութեան, այդ մրցակցութիւնը Հայաստանի հետ հաշտութիւն կնքելու համար եւ դրան վերաբերող քարոզչութիւնը ցոյց է տալիս, որ բոլշեւիկեան-քեմալական դաշինքը կարող է ճեղքեր տալ Կովկասում երկու կողմերի միտման հակադիր ձգտումների պատճառով: Սթոքսի հետ Օզպորնի զրոյցի նպատակը պարզելն էր, թէ վերջիվերջոյ ինչ հաղորդել հայկական կողմին: Եւ իվերջոյ դա բրիտանացի այդ պաշտօնատարներին բերում է հետեւութեան, որ թուրքերի կողմից մշակուած պայմանները կը համապատասխանեն հայկական պետութեան այդ պահի վիճակով առկայ սահմաններին, սակայն կարծում, որ Թուրքիայի հետ պայմանագիրը աւելի լաւն է, եւ որ հայերը այլ ընտրութեան հնարաւորութիւն չունեն, եւ՝ բոլշեւիկների հետ կնքուող պայմանագրի հեռանկարը, անկասկած վատն է[67]:

ՍԹՈՔՍԸ ԵՒ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ

Բացի նրանից, որ Դաշնակից տէրութիւնները ի սկզբանէ այն համոզման չէին, որ Հայաստանը կը կարողանայ պաշտպանուել բոլշեւիկների կամ խորհրդաթուրքական միացեալ յարձակումից, առաջին աշխարհամարտի աւարտից իսկ քիչ անց արդէն պատրաստ էին իբրեւ Ռուսաստանի-Թուրքիայի ազդեցութեան ոլորտներում գտնուող ՀՀին դուրս թողնել իրենց ռազմավարական հաշուարկներից, կենտրոնանալով Միջագետքի յարակից շրջանների վրայ: Դրան յաջորդեց խաղից դուրս գալու ռոռոնումները, ինչը մասնաւորապէս ցայտուն դրսեւորուեց բրիտանական դահլիճի քայլերում. բրիտանական վերջին զօրաջոկատը Անդրկովկասից դուրս էր բերուել դեռեւս 1920 Յուլիսին՝ Սեւրի եւ թուրք-հայկական պատերազմի նախօրէին: Դրան յաջորդեցին 'արդարացումները' եւ երկերեսանիութիւնը, հայերին մեղադրելով անվստահելիութեան, կեղծ տագնապների եւ սեփական թերացումների մէջ, որպէսզի խուսափեն ռազմական միջամտութիւնից, անգամ բառախաղ կազմակերպելով, թէ հայերն իրենք են խնդիրը այնպէս ներկայացրել, թէ իրենք կը կարողանան ետ մղել թուրքական բանակները, սակայն չեն կարողացել, քանի որ դաշնակիցները լքել են իրենց: Ակնյայտ էր, որ Բրիտանիան եւ միւս երկրները պարզապէս չցանկացան վտանգել իրենց շահերը, նախընտրելով բարեկամանալ մուսուլմանական աշխարհի հետ, ինչպէս դա կար նախկինում եւս:

Իսկ Թուրքիան ըստ երեւոյթին նպատակ էր դրել հայերին ջախջախել, քանի դեռ Կարմիր բանակը զբաղուած էր այլ խնդիրներով, քանի որ հակառակ դէպքում հնարաւոր չէր լինի ետ բերել 1914ի սահմանները եւ դեռ աւելին: Մինչ Ռուսաստանը այլ վայրերում առկայ դժուարութիւնների պատճառով անորոշ ժամանակով յետաձգել էր Հայաստանի դէմ ռազմական արշաւը եւ փոխարէնը բանակցում էր Հայաստանի հետ:

---

[67] Նոյն, էջ 790-1:

Սթոքսը փորձեց ուղղորդել նաեւ հայ-վրացական պաշտպանական դաշինքի հարցը եւ այն օգտագործել որպէս յոյսի հնարաւորութիւն՝ սովետների դէմ պայքարը օրակարգային դարձնելու եւ անդրկովկասեան հանրապետութիւններին պատուար դարձնելու ընդդէմ Ռուսաստանի, թէ-կուզեւ դրանց հնարաւոր զոհաբերման գնով:

Դեռեւս Հոկտեմբերի 18ին Սթոքսը իր զեկուցագրերից մէկում նշել էր, թէ վրացական իշխանութիւնները ձեռնարկել են բոլշեւիկների դէմ պաշտպանական գաղտնի պայմանագրի մասին ՀՀ կառավարութեան խնդրագրի քննարկումը, միաժամանակ նշելով, որ հապշտապ որոշում չի կայացուել՝ մինչեւ Եւրոպայից ԱԳ նախարար Եւգենի Գեգեչկորու վերադարձը: Այդուհանդերձ, ԱԳ նախարարի պաշտօնակատար Սաբախտարաշվիլին վստահեցրել էր Տէր Մինասեանին, որ կ'օգնեն Հայաստանին՝ թոյլ տալով կամաւորներ հաւաքագրել Վրաստանում եւ խոչընդոտներ չյարուցել ռազմական առաքումների պարագայում: Սաբախտարաշվիլին յայտարարել էր նաեւ, որ պատրաստ են պաշտպանուելու բոլշեւիկեան յարձակումից, սակայն չեն կարող պարզապէս Հայաստանին օգնելու համար պատերազմի դուրս գալ Ռուսաստանի դէմ[68]: Բեկզադեանը այս կարեւոր գրութեան մէջ հաղորդում է նաեւ Հոկտեմբերի 22ի տեսակցութեան մասին Սթոքսի հետ, յայտնելով նաեւ թէ վրացիների հետ ընդհանուր գործակցութեան ուղղութեամբ առանձին յոյսեր չի տածում, թէ վրացիները հայերի հետ կը գործակցեն միայն երբ իրերի դասաւորութեամբ ստիպուած լինեն, իսկ Լեհաստանի եւ Ադրբեջանի կողմից ՀՀն ոչ միայն ակնկալութիւններ չպիտի ունենայ, այլ նոյնիսկ կարող է հանդիպել թշնամական վերաբերմունքի Ադրբեջանի կողմից[69]: Միաժամանակ ներկայացուում են նոյն օրը ՀՀ պատուիրակներ Մամիկոնեանի եւ Խաչատրեանի՝ Ռամիշվիլու հետ ունեցած հանդիպման որոշ կարեւոր մանրամասներ: Այդ համնդիպման, առաջարկ էր եղել արագացրած թափով բանակցել հայկական պատուիրակութեան հետ (փոխադարձ համաձայնութեամբ որոշել էին առաջին նիստը նշանակել Հոկտեմբերի 24ին): Բեկզադեանը Ռամիշվիլուն յիշեցնում է, որ ՀՀ կառավարութիւնը ընդհանուր գործակցութեան հարցապնդումներ է արել վրացիներին, ակնկալով շուտափոյթ պատասխան: Յայտնուել էր սակայն, թէ հարցն արդէն որոշուած է եւ պատասխանը կը ստանան Ժորդանիայից, սակայն իբր թէ վերջինիս հիւանդութեան պատճառով տեսակցութիւնը խանգարուել է[70]: Բեկզադեանը տեղեկացնում է նաեւ իրեն այցելած Քորպէյի հետ ունեցած հանդիպման մասին, որին եւս *"հետաքրքրել է"*, թէ վրացիները ի՞նչ են պատասխանել հնարաւոր հայ-վրացական զինակցութեան մասին: Բեկզադեանը սակայն Քորպէյին տե-

---

[68] Յովհաննիսեան, *Հայաստանի, հտր. IV*, էջ 260:

[69] Նոյն:

[70] Նոյն:

ղեկացնում է, որ իրենք մեծամասնականների եւ տաճիկների դէմ կռուում վրացիներից աւելին՝ քան բարեացակամ չէզոքութիւն, չեն կարող ակնկալել, չժխտելով այն հանգամանքը, որ վրացական կողմը, իհարկէ մասնաւոր դէպքերում կարող է եւ աջակցել, որի մասին իրենք ունեն որոշ տեղեկութիւններ, որոնք թոյլ են տալիս պնդելու, որ հնարաւոր է վրացիները բաց չթողնեն Բաթումիից զինուորական կարիքների համար անհրաժեշտ ապրանքները[71]: Բեկզադեանը նշելով, որ իբր թէ վշտացած այդ տեղեկութիւնից, Քորպէյը խոստացել է իսկոյնեւեթ տեսակցութիւն ունենալ վրաց ԱԳ նախարարի հետ եւ յայտնել, որ բռնած դիրքը վատ տպաւորութիւն կը թողնի Ֆրանսայի եւ Դաշնակիցների վրայ: "Լրջօրէն հաւատալով" այդ խոստմանը, ինչպէս ինքը՝ Բեկզադեանն է պնդում, կրկին խնդրում է Քորպէյին հաւաքական դիմումով ազդեցութիւն գործ դնել վրացիների վրայ, միաժամանակ տեղեկացնելով, թէ նոյն օրը Սաբախտարիշվիլին յայտնել է իրեն, որ պէտք է գրաւոր ներկայացնել առաջարկը, որպէսզի նրանք էլ գրաւոր պատասխանեն[72], ինչն արւում է Հոկտեմբերի 25-26ին:

Վրաստանի կառավարութեան հետ յետագայ բանակցութիւնների պատասխանատուութիւնը դրուած էր Բեկզադեանի վրայ, որը փորձում էր կառավարութեան հետ համատեղ այդ դժուարին խնդրին լուծումներ գտնել եւ վրաց-հայկական դաշինքի ձեւաւորումով դիմագրաւել թշնամուն եւ Հայաստանին դարանակալած նոր փորձութիւններին[73]: Այդ մասին է փաստում Բեկզադեանի 1920 Հոկտեմբերի 26ի զեկոյցը ԱԳՆին՝ Վրաստանի պատուիրակութեան անդամներ Ռամիշվիլու, Սաբախտարաշվիլու եւ Ս. Գ. Մդիւանու հետ Հկտեմբերի 25ին վարած բանակցութիւնների մասին՝ ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու առնչութեամբ, որին մասնակցել են նաեւ Մամիկոնեանը, Խաչատրեանը: Ըստ Բեկզադեանի, տեղի ունեցած երկու նիստերում էլ վրացական կողմը սկսում է սահմանավէճերից, պահանջներ ներկայացնելով Օլթիի եւ Արդահանի գաւառների նկատմամբ՝ դրանով պայմանաւորելով փոխադարձ պաշտպանութեան հնարաւորութեան խնդիրը: Օգտուելով ՀՀ համար ստեղծուած ծանր իրավիճակից, վրաց պատուիրակները առաջարկում են վերացնել Լոռու չէզոք գօտին, եւ առանց նախապայմանների Ախալքալաքն ու Ախալցխան ճանաչել իբրեւ Վրաստանի անբաժանելի մասեր: Հարցի քննարկմանը այս անգամ ներգրաււում է նաեւ Վրաստանի զօրքերի սպայակոյտի պետ Զախարիաձէն:

Ըստ Բեկզադեանի, Ռամիշվիլին արտայայտւում է աւելի պարզ եւ յստակ, գտնելով որ վտանգն ընդհանուր է, որ իրենք պէտք է աջակցեն

---

[71] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 48:

[72] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 48:

[73] Վ. Վիրաբեան, *Հայ-վրացական ռազմաքաղաքական յարաբերութիւնները 1918-1921 թթ.*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2016, էջ 625-57:

Հայաստանին, որ նա կարողանայ դիմադրել իր թշնամիներին, եւ իրենք ցոյց կը տան թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական աջակցութիւն: Ռամիշվիլին գտնում էր, որ բարոյապէս դա կը լինի իրենց պատասխանը Չիչերինին: Հայաստանին օգնելու օգտին համակրանքով են արտայայտուել Լոմտատիձէն եւ ազգային զինուած աշխարհազօրի պետ Վ. Ջուղելին, նշելով որ իրենք հնարաւորութիւն կը տան զինակոչի ենթարկել վրաստանահպատակ հայերին, ինչպէս նաեւ տալ նպաթ, թոյլ տալով արտահանել ռազմական պիտոյքներ՝ նոյնիսկ ի վնաս Վրաստանի շահերի՝ վտանգելով յարաբերութիւնները Խորհրդային Ռուսաստանի հետ: Ըստ Բեկզադեանի, Ռամիշվիլին խոստանում է *«բարեացակամ չէզոքութիւն»*, գտնելով որ իրենք աւելին չեն կարող անել եւ պէտք չէ իրենցից դրանից աւելին խնդրել: Ռամիշվիլին յայտնել էր Բեկզադեանին, որ ստեղծուած իրավիճակում Ռուսաստանի դէմ իրենք չեն կարող կռուել, որովհետեւ պայմանագիր ունեն, որը չեն ցանկանում խախտել, իսկ Քեմալի դէմ կռիւ չեն կարող սկսել, որովհետեւ Աջարիայում եւ Ախալցխայում թուրք հպատակներ ունեն, սակայն միաժամանակ վերապահում անելով, որ եթէ թուրքերը պատերազմ սկսեն Վրաստանի դէմ, իրենք երեք օրում զորակոչ կը սկսեն եւ կը կռուեն[74]: Ըստ Բեկզադեանի, վրացական կողմի մօտեցման մէջ ակնյայտ հակասութիւններ կային, որը ցայտուն արտայայտուեց Մդիւանու ելոյթում: Վերջինս, Ռամիշվիլու խօսքից յետոյ կտրուկ աւելացրել է, որ ՀՀի հետ զինուորական զինակցութեան մասին խօսք լինել չի կարող, մինչեւ որ սահմանավէճերը չլուծուեն[75], ինչն ընդամէնը անցանկալի զինակցութիւնից խուսափելու դիւանագիտական խուսանաւում էր յիշեցնում: Ինչպէս փաստում է Բեկզադեանը, Ռամիշվիլին միջամտում է եւ փորձում մեղմել լարուածութիւնը, սակայն իզուր: Բեկզադեանը դա մեկնաբանում էր նրանով, որ վրացական կողմը ռուսական վտանգը Հայաստանի դէմ լուրջ չէր համարում, եւ չէր տագնապում, որ Հայաստանը շուտով կ'ընկնի ռուսական ազդեցութեան տակ եւ կը դառնայ «խորհրդային», իսկ Թուրքիայի կողմից էլ իրենք իրենց վտանգուած չէին համարում եւ չէին ցանկանում կռուել նրանց դէմ[76], ինչը վրացական շահերի մեկնակէտից հասկանալի պէտք է լինէր ՀՀ կառավարութեան համար: Բեկզադեանի վկայութեամբ, Ռամիշվիլին ելնելով իրենց այն պնդումից, որ արդէն ընդհանուր վտանգ չկայ, նոյնիսկ յայտարարել էր. *«Վտանգն ու թշնամիները միայն Հայաստանինն են եւ Վրաստանին այլեւս վտանգ չի սպառնում: Իսկ դրանից ընդամէնը երկու ամիս առաջ Վրաստանն աւելի վտանգի զգացողութիւն ու-*

[74] *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920*, էջ 312-3:
[75] Նոյն, էջ 313:
[76] Նոյն:

նէր եւ Օգոստոսին ինքն էր Հայաստանին առաջարկում "ընդհանուր գործողութիւնների համաձայնագիր կնքել"»[77]:

Այս զրոյցից Բեկզադեանը եկել էր այն եզրայանգման, որ վրացիները իրենց հետ չեն զինակցելու եւ այլեւս պէտք չի նրանց վրայ յոյս դնել, այլ՝ բաւարարուել, որ վրացիները չխանգարեն իրենց զօրակոչին եւ տարանցմանը՝ դիւրացնելով ապրանքների արտահանումը Վրաստանից եւ մասնաւորապէս Բաթումիից, գտնելով որ դա կը լինի այն առաւելագոյնը, որ վերջիններս տրամադիր են անելու, եւ դրանով իսկ խախտում են իրենց չէզոքութիւնը: Իսկ Զախարիաձէն, Բեկզադեանի վկայութեամբ, տեղեկացրել էր, որ հայերի դէմ կռւում են 18,000 զօրք (երեք զօրաբաժին), որից երեքական հազար Օլթիի (նոր 3րդ զօրաբաժինը), Մերդենէկի եւ Իգդիրի շրջանում, մնացածը Կարսի շրջանում, աւելացնելով, որ փաստը ճշտուել է Սթոքսի տուեալներով, որը նաեւ տեղեկացրել էր, որ վիճակը ծանր է, իր կառավարութեանը յղած հեռագրերից ոչ մէկի պատասխանը դեռ չի ստացել![78]: Երկար, սակայն ապարդիւն բանակցութիւններից յետոյ միայն Բեկզադեանը հարկադրուած խոստովանում է, որ *«վրացիների դիրքը պարզ է եւ բնական իրենց շահերի տեսակէտից»:* Չնայած վրացիները դրա հետ մէկտեղ փորձում էին կեղծաւորաբար սիրաշահել: Այդ նոյն 1920 Հոկտեմբերի 26ին Թիֆլիսում ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութեանը կից ռազմական կցորդ, Դեր-զօրավար Յովսէփ Արտեմի Քիշմիշեանը զինուորական նախարարին ուղղած հեռագրում յայտնում էր, որ վրացական կառավարութիւնը համաձայնութիւն է տուել իրականացնել հայերի հարկադիր զօրակոչ, հաշուի չառնելով հպատակութիւնը: Քիշմիշեանը ենթադրում էր, որ կարելի է օգտագործել այդ թոյլտուութիւնը առաջին հերթին սպաների նկատմամբ, որոնց եռօրեայ ժամկէտում Վրաստանի ՆԳ նախարարութեան յատուկ ջոկատի միջոցով պէտք է պարտադրէին մեկնել Հայաստան, ինչն այնուհետեւ կարող էր վերաբերուել նաեւ նախկին զինուորներին, եւ վերջապէս մնացած քաղաքացիական բնակչութեանը աստիճանաբար, սկսելով աւելի վաղ տարիքից[79]:

Ելնելով պահի թելադրանքից, Բեկզադեանը փորձում է ինչ-որ հակամիջոցներ գտնել եւ դիմելով Սթոքսին, խնդրում է, որ նրա միջոցով Դաշնակիցների ներկայացուցիչները ճնշում գործադրեն վրացիների վրայ, որպէսզի նրանք գան օգնելու հայերին: Սակայն Սթոքսը ասելով, որ Խատիսեանը իրեն դիմել է այդ խնդիրքով, հայկական կողմից պահանջելով գրաւոր դիմումնագիր, այդուհանդերձ մշուշապատ պատասխան[80] է տալիս: Սթոքսը աջակցելու անորոշ խոստումներ տալով, այնուամենայնիւ

---

[77] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 83, թ. 7-9:

[78] Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920, էջ 312-3:

[79] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 250:

[80] Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920. էջ 312-3:

Բեկզադեանին յայտնել էր իր համոզումը թէ վրացիները իրենց հետ չեն կռուելու եւ չեն էլ օգնելու, պատճառաբանելով, թէ վրացիք պիտի նաւթ ստանան Ադրբեջանից, եւ իրենց եգիպտացորենի բերքը պէտք է հաւաքեն Արեւմտեան Վրաստանում:

Ելնելով Բեկզադեանի զեկոյցի վերլուծութիւնից, կարեւոր է նշել, որ Սթոքսը ձգտելով Բեկզադեանին մոլորութեան մէջ գցել, գաղափար է հրամցրել վերջինիս, թէ քանի որ անգլիական դահլիճում երկու հոսանք կայ, որոնցից մէկը կտրականապէս դէմ է բոլշեւիկների հետ համաձայնութեանը, իսկ միւսը՝ կողմ եւ, որ նրանք մրցում են միմեանց դէմ եւ ոչ մի կողմը դեռ չի յաղթել, ինքը մնացել է առանց հրահանգների, եւ առանձնակի պէտք չէ յոյս դնել չտրուած խոստումների վրայ[81]: Բեկզադեանը կառավարութեանը ներկայացնում է վրացիների մտադրութեան մասին՝ իրենց վէճերը յանձնել իրաւարարութեան, որից ելնելով առաջարկում է իրաւարարութեան ներկայացնել երկու կողմերի պահանջների *maximum*ը եւ ոչ *minimum*ը, ինչպէս գտնում էին վրացիները[82]:

Վրաստանի ԱԳ նախարար Սաբախտարաշվիլին Հոկտեմբերի վերջին յայտնում է Բեկզադեանին եւ Սթոքսին, որ երկաթուղու Սանահին-Սադախլօ հատուածը անհրաժեշտ է պաշտպանել թուրքերից: Դրա դէմ Բեկզադեանը բողոքում է, հրահանգելով չէզոք գօտու յանձնակատար Վ. Վալադեանին բողոքել այդ ոտնձգութեան դէմ: Նոյն ոգով արտայայտուել էր նաեւ զօրավար Մ. Արէշեանը, որ դեռ Նոյեմբերի 5ին Ղարաքիլիսայից հեռագրել էր, որ վրացիները հեծելազօր են ուղարկել Սանահին, իսկ Հայաստանում Վրաստանի ռազմական կցորդ զօրավար Կարալովը անգամ հրահանգել էր, որ թոյլ չտան, որ հայերն առանց անցագրի անցնեն: Դրա հետեւանքով Կարալովի եւ վարչապետ Օհանջանեանի միջեւ դիւանագիտական փոխհրաձգութիւն է սկսւում[83]: Իվերջոյ, այս ամէնը աւարտւում է նրանով, որ ՀՀ կառավարութիւնը համաձայնւում է *1920 Նոյեմբերի 13ի համաձայնագրով ժամանակաւորապէս՝ երեք ամսով Չէզոք գօտին յանձնել Վրաստանի տնօրինութեանը*, եւ լիազօրում Բեկզադեանին այն ստորագրել, որից օգտուելով Վրաստանը նորանոր ոտնձգութիւններ է կատարում Հայաստանի դէմ, չնայած խոստումներ էին տրուել չոտնահարել տեղական հայ բնակչութեան շահերը: Վրաստանը ոտնահարելով տրուած խոստումները, արդէն Նոյեմբերի 15-16ին զօրքեր է մտցնում Ջալալօղլի, Բզովդալ, Շահալի, որի դէմ Բեկզադեանը կտրուկ բողոքում է, սակայն հակամարտութիւնը դեռեւս երկար ժամանակ շարունակւում է է՛լ աւելի շիկացնելով վիճակը[84]: Բեկզադեանը 1920 Նոյեմբերի 26ին եւս բողոքագիր

---

[81] Նոյն, էջ 314:
[82] Նոյն, էջ 314:
[83] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 150, 153: գ. 602, թ. 84-85: ց. 2, գ. 281, թ. 2:
[84] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 422:, գ. 607, թ. 214-15: ֆ. 200, ց. 2, գ. 102, թ. 1-3:

է ուղարկում Վրաստանի հանրապետութեան ԱԳ նախարարին, նշելով, որ ի պատասխան չէզոք գօտու հարաւային սահմանը վրացական զօրքերի կողմից անցնելու վերաբերեալ իր նախորդ հայտագրի, դեռ Նոյեմբերի 22ին յայտնել էր, թէ վրացական կողմը համաձայնուել է ետ կանչել այնտեղ ուղարկուած իր հետախոյզներին: Այդուհանդերձ, Բեկզադեանը յայտնում էր, որ չնայած ձեռք բերուած համաձայնութեանը, վրացական զօրքերը իրենց կառավարութեան հրահանգով Նոյեմբերի 23ին անցել են ՀՀ անվիճելի տարածքում գտնուող Շահալի եւ Փամբակ, գրաւել նաեւ այլ կէտեր: Բեկզադեանը միագամայն անբացատրելի համարելով Վրաստանի պաշտօնական հաւաստիացումները, իր վճռական բողոքն էր յայտնում Նոյեմբերի 13ի համաձայնագրի այդպիսի կոպիտ խախտման, ինչպէս նաեւ ՀՀ գերիշխան իրաւունքների ոտնահարման դէմ, եւ պնդում վրացական զօրքերն անյապաղ ետ կանչել գրաւած կէտերից, որպէսզի այն ՀՀ կողմից չդիտուի որպէս բացայայտօրէն անբարեացակամ մի ակտ, որը նպատակ ունի օգտագործել հարեւան հանրապետութեան ժամանակաւոր ծանր դրութիւնը[85]:

Դահլիճի կազմաւորումից յետոյ Վրացեանը Թիֆլիսում ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութեան միջոցով բանաւոր հարցում է անում դեռեւս Թիֆլիսում գտնուող գնդապետ Սթոքսին՝ Հայաստան ռուսական զօրքեր մտցնելու յետագայ քայլերի կապակցութեամբ: Բրիտանական յանձնակատարը որոշակի պատասխան չի տալիս: Վրացեանի դահլիճը ընդունում է Խորհրդային Ռուսաստանի միջնորդութիւնը, սակայն համաձայնութիւն չի տալիս Հայաստան զօրքեր մտցնելուն: 1920 Նոյեմբերի 23ին Սթոքսը Վրաստանում Հայաստանի խորհրդային դիւանագիտական առաքելութեան հետ զրոյցում զարմանք է արտայայտում, որ «*հայերը, հրաշալի տեսնելով, որ դաշնակիցները չեն օգնի իրենց, չնայած արդէն բաւականաչափ ժամանակ է անցել թուրքերի յարձակման անցնելուց յետոյ, այդուհանդերձ անհրաժեշտ են գտնում պարզել, ցանկանու՞մ են արդեօք դաշնակիցները իրենց օգնել*», որը պատասխան էր Վրացեանի հարցումին[86]:

Դաշնակիցների զուսպ աջակցութիւնը եւ խօսքերով խրախուսելն աւարտուեց ՀՀի համար Կարսի ու Ալեքսանդրապոլի անկմամբ, որը յանգեցրեց Դաշնակիցների խիստ անտարբեր, հայեցողական վերաբերմունքին, իսկ Հայաստանի Հանրապետութեան ջախջախիչ պարտութիւնից յետոյ Սթոքսի եւ նրա կառավարութեան վերաբերմունքը արմատապէս կերպափոխուեց, Բրիտանիան իր վրայից գցեց հայերի եւ յոյների համար պատասխանատուութիւնը, ձգտելով վերականգնել իր կորսուած դիրքերը

---

[85] *Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ ռեւոլիւցիան եւ սովետական իշխանութեան յաղթանակը Հայաստանում. փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1960, էջ 398-9:

[86] Туманян, էջ 375:

մուսուլմանական աշխարհում եւ կարգաւորել իր յարաբերութիւնները Քեմալի Թուրքիայի հետ:

Դեկտեմբերի 2ին Թիֆլիսում ռադիոյով ստացուեց Ուուտրօ Ուիլսընի հաղորդագրութիւնը, թէ վերջինս տեղեկացրել է Ազգերի Լիգայի նախագահին ի գիտութիւն, որ ինքը իր վրայ է վերցնում միջնորդութիւն՝ որոշելու հայ-թուրքական սահմանը եւ պատերազմի լուծարումը, թէ՝ ինքը կարող է Թուրքիայի վրայ գործադրել բարոյական ճնշում, իսկ միջնորդների դերը իրենց վրայ վերցնում էին Սպանիան եւ Պրազիլը: Իսկ արդէն Դեկտեմբերի 6ին չարաբաստիկ դերակատարում ունեցած Սթոքսը ԱԳՆից հեռագիր է ստանում, որ Ուիլսընը շոյուած կը լինէր, եթէ իրազեկուէր քեմալականների հետ կապեր հաստատելու հնարաւոր ուղիների մասին: Սթոքսը, որը դեռ Դեկտեմբերի 4ին հեռագրել էր Հայաստանում տեղի ունեցող վերջին իրադարձութիւնների մասին, պատասխանում է, որ հանգամանքները փոխուել են, սակայն յայտնում է, որ ամէն դէպքում քեմալականների հետ կարելի է յարաբերուել Քեազիմ բէյի միջոցով, եւ Դեկտեմբերի 13ին Ազգերի Լիգայի խորհրդի նախագահի միջոցով Ուիլսընի խնդրանքով իտալական կառավարութիւնը հարցում է անում իր ներկայացուցչին Թիֆլիսում, թէ ում միջոցով եւ ինչպէս կարելի է հաղորդագրութիւն ուղարկել քեմալականներին Թիֆլիսի կամ Կ. Պոլսի միջոցով[87]: Սրանք, սակայն, ուշացած քայլեր էին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Եւ այսպէս, Անդրկովկասում բրիտանական յանձնակատար Սթոքսը հայերի համար լաւագոյն ելքը համարեց թուրքերի հետ հաշտութեան կնքումը եւ հրաժարուելը ինչպէս Միացեալ Հայաստանի ստեղծման հսկայաձաւալ սեփական ծրագրերից, այնպէս էլ ըստ էութեան Սեւրի պայմանագրից, նախընտրելով թուրքերին բոլշեւիկների կամ նրանց իշխանութեան տակ անցնելուց: Այդպէս, Սթոքսը Հայաստանի համար ուրուագծեց ճանապարհ դէպի Ալեքսանդրապոլ, որը դարձաւ բրիտանական կառավարութեան քաղաքականութեան անկիւնաքարը Անդրկովկասում: Սթոքսի կարծիքով թուրքական ներխուժումը Հայաստան արմատական ձեւով փոխեց ողջ քաղաքական դրութիւնը տարածաշրջանում:

[87] Նոյն, էջ 379:

THE ACTIVITIES OF THE BRITISH MILITARY-POLITICAL REPRESENTATIVE IN THE TRANSCAUCASUS, COLONEL CLAUDE STOKES, IN ARMENIA AND TRANSCAUCASUS IN 1920

(SUMMARY)

VANIK VIRABYAN
vanik.virabyan@mail.ru

In the Transcaucasus, in view of the full disclosure of the activities of the Allied military-political representatives in Armenia, it is possible to cover the activities of the British High Commissioner Colonel Claude Bayfield Stokes. After making a decision at the beginning on the withdrawal of British troops from the Transcaucasian region in 1919, he became the representative of the Allied High Commissariat in Baku. C. Stokes was born in India and acted as a staff spy in different countries, in 1907-1911 he was a British military attaché in Tehran, and during the First World War he served in the intelligence department of the General Staff of the British Indian Army. Stokes, like many British officers in the «Indian Service», knew Russia well, its intentions in the Middle East, and its attitude toward Azeris, and was a staunch supporter of Azerbaijan's and Georgia's independence.

By his order, the first British detachment arrived in Baku on August 4, 1918. After demobilization in 1919 Stokes remained in Baku in the fall as an unofficial political observer, before joining O. Wardrop's mission, initially becoming a loyal friend of Azerbaijan's and the anti-Bolsheviks, through whom Azerbaijan gained a loyal ally. According to D. Hasanli, Stokes was a key link in the British mission for securing contacts with the «Azerbaijani government» and representing its interests, discussing Chicherin's note with Azerbaijani Foreign Minister Khan-Khoyski, establishing contacts with London, and so on.

The restrained support of the Entente allies ended for Armenia with the fall of Kars and Alexandropol, although until then the British High Commissioner, Colonel Stokes, had persuaded the government to actively support Armenia. Stokes once again asserted that Great Britain, with all its responsibility, was obliged to establish its own positions in the Muslim world and to uphold relations with M. Kemal. And so the British Commissar in the Caucasus, Stokes, considered the best way out for the Armenians was to make peace with the Turks – to back down, or rather to abandon their enormous plans to create a Greater Armenia, rather than lose their independence to the Bolsheviks or come under their rule. Thus, Stokes was on his way to Armenia from Alexandropol. Stokes believed that the Turkish invasion of Armenia had radically changed the whole political situation in the region. Drawing on regional differences became essential for him.

Stokes also tried to direct the issue of the Armenian-Georgian defense alliance, to use it as an opportunity to put the struggle against the Soviets on the agenda, thereby turning the Transcaucasian republics into a bulwark against Russia, albeit at the cost of their possible sacrifice.